

Դ.

## ՄԱՐՍՅ ԳԵՂԻԾԻ=ՄԱՐԳԵԱԼԻԾԻ.

ա.

Մեր դասական հեղինակների Մարքն է Մարաստանը. իսկ Մարաց աշխարհը, մանաւանդ թէ Մարաց գաւառը Հայաստանի հարաւային երկիր Վիշապազունքը չեն Աժդահակի սերունդ Մարեր—Մուրացան նախարութիւն, այլ Հայաստանի նախնական բնակիչների Արարատում իշխող տունը, քաջքերը՝ Ոստանիկ և Արշակունի տունը. ժողովրդական զրոյցների միամիտ գերմարդ գեերը և չար դե—սատանաներ։ Մուրացան նախարարութեան մարական ծագումը «թագաւորութեան երկրորդ լինելը» շփոթութիւն է Մարաց հետ նոյնացնելուն։ Մարերը հաւանօրէն ապրում էին հարաւում։ Մարացւոց տէր ժողովրդական բացատրութիւնը Մարաց մէջ Մարակերտ շինողը Արտաշիասի որդին Արտաւազդն է և ոչ թէ Տրդատ Արտաշէսի, որի յաջորդ Եչեդար—Շիղարը շփոթուած նոյնացուած Արտաւազդի հետ. Շարուրում էր զուցէ «Ապարանք Արտաւազդայ», սակայն Մարազկերտը հարաւում—Աժդահակի և իւր սերունդի Վասպուրականում բնակուելու աւանդութիւնը ըստ Թովմաս Արծրունու, Տրդատ-Արտաշէսի անցքերն ևս հիւսիսում՝ Արարատում և հարաւում Վասպուրականում. եզրակացութիւն։

Մեր դասական հեղինակներն ունին «Մարք», «Մարաց աշխարհ» և «Մարաց գաւառ» անուններ, որ պէտք է միմեանցից զանազանել։ Երբ Ազաթանգեղոսն ասում է, թէ առաքեալները «Մփուցան . . . ոմանք ի Մարս և ոմանք ի Պարթևս, ոմանք ի Խուժաստան»<sup>4</sup>, այդ ի հարկէ իսկական Մարաստանն է, որ թեպէտե լեռնային աշխարհ լինելով՝

շատ անգամ կոչւում է առանց անուան միայն «լեռնոտ երկիր»<sup>1</sup>, բայց և այնպէս այդ չէ կարող Ազաթանգեղոսի նախընթաց դլխում կորդուաց և Ատրպատականի միջև յիշուած «Մարաց ամուր աշխարհը» լինել, որքան և այդ էլ կարող էր նշանակել: Այսպէս էլ թուում է, թէ Սերէսուր տարբերում է «Մարք»<sup>2</sup> իրքեւ ժողովուրդ և ամբողջ երկիրը<sup>3</sup> և «Մարաց ամուր աշխարհը»<sup>4</sup> և մենք տեսանք, որ նա ունէր և «Մարաց գաւառ»<sup>5</sup>: Սոյնպէս և Խորենացին ունի Մարքոյն Մարաստան<sup>6</sup>, որից տարբեր են «Կողմանք ամրութեանն Մարաց»<sup>6</sup>, որտեղով անցնում էին Սիւնիք և կամ թէ «Կողմանք Մարաց»<sup>7</sup>, որ Խորենացին առել է կորիւնից, այլ և Հոփիսիմեանց պատմութեան յիշատակած «Մարաց երկիրը», կանգուար-Ազուաւաքարին և Պաղատ լեռան սահմանակից «Մարաց երկիրը»<sup>8</sup>: Վերոյիշեալ չորս հեղինակները, բացի կորիւնից, յիշում են և Ատրպատականը:

Մեր նպատակը չէ քննել այն բոլոր դեպքերը, յիշել որտեղ այդ անունները ուրիշները ևս յիշատակում են. բաւական է միայն շեշտել որ Ազաթանգեղոսի վկայութեամբ Հայաստանին էր պատկանում «Մարաց ամուր աշխարհը» Տրդատ Բ. Մեծի ժամանակ և որ Արշակ Բ. ի դէմ ապստամբեց այդ «Ամուր աշխարհն Մարաց», բայց Պապի ժամանակ Մուշեղ սպարապետը նուաճեց այդ միենոյն երկիրը՝ «զկողմանսն Մարաց»<sup>9</sup>: Եւ այս ի հարկէ կարող չէ լինել ոչ Մեծ Մարաստանը և ոչ էլ Փոքրը՝ Ատրպատականը,

1. Արտաշիր Սասանեանի համար ասուած է. Darauf zog er.. nach Nusadhân und nahm es mit Gewalt ein, ebenso das übrige Bergland Adharbaigân, Armenien und Mosul». իսկ Պապիկի համար. «Dann schrieb er an Ardawân den Pahlawi, König des Berglandes und der angrenzenden Länder» (Tabari, էջ 15, 7):

2. Սերէսուր, Բ. էջ 13 և Ա. էջ 8: 3. Անդ, Ա. էջ 9:

4. Անդ, Գ. լ.Բ. էջ 112. Հմմատ. Eransvahr, էջ 19:

5. Խորեն, Ա. իԱ., 46. Բ. լ.Բ., 116 ևն: 6. Անդ, Բ. կՊ, 141:

7. Խորեն, Գ. Խէ., 238. Հմմատ. Կորիւն, էջ 16, 21. Վենետիկ 1894: 8. Խորեն. էջ 301—302: 9. Բուզ. Դ. Ծ., 164, ե, ԺԱ, 214:

մանաւանդ որ Յուղանդարանն ևս առանձին յիշում է և Ատրպատականը։ Անշուշտ շատ առաջ Մարաստանի մասն է եղել այդ աշխարհը, ինչպէս անունից էլ պարզ երեսում է։ բայց որ գոնեա Դ. գարում Հայաստանին էր պատկանում և առանձին աշխարհագրական, հաւանօրէն և ազգագրական միութիւն էր կազմում։ որ մոքով և գործ են ածել մեր պատմագրերը։

Արդ Հայաստանի որ մասումն էր գտնւում այդ «Մարաց ամուր աշխարհը», որ կոչւում է և «Մարաց գաւառ», «կողմանք ամրութեանն Մարաց» «Մարաց երկիր» և այլն Մինչդեռ Աղաթանգեղոսի անուշաղիր թողնուած վկայութիւնից շատ պարզ է, որ այդ աշխարհը կամ գաւառը գտնւում է Հայաստանի հարաւում կորդուաց և Մահքրտանի ու Ատրպատականի միջև, այլ բան է ասում մեր ազգային յայտնի աւանդութիւնը։ Խորենացին պատմում է, որ Տիգրան Հայկազեանը սպանելով Մարաց Աժդահակ թագաւորին «Եւ զտուն նորա ի գերութիւն վարեաց, և զԱնոյշ մայրն վիշապաց»<sup>1</sup>, իսկ զԱնոյշ զառաջին կինն Աշդահակայ, և զԱնոյշ ի սերմանէ Աշդահակայ աղջկունս՝ հանդերձ պատանեկօք և այլ բազում զերեօք, որչափս թէ աւելի քան զբիւր մի, մնակեցուցանէ յարևելեաց ուսոց մեծի լերինս՝ մինչեւ ի սահմանս Դողթան, որ են Տամբատ, Ռոկիոզայ, Դաժգոյնք, և որ այլք առ եղերք գետոյն գաստակերտք, յորոց մինն է Վրանջունիք, մինչեւ հանդէպ ամբոցին Նախջաւանու։ և զերիս աւանսն զիւրում։ և զջուղայ և զԽոշակունիս<sup>2</sup>, իսկ ի միւս կողմանէ գետոյն զբոլոր

### 1. Խորեն. Ա., լԱ., 59:

2. Դ. Ինձիճեանը յիշում է մի գիւղ ռԽոչկաշէն։ Գեօղ Հայոց փոքր ինչ հիւսիս ի Զահուկ աւանէ առ ստորոտով բարձր լերին որ կոչի Եւլան ղաղը [=Իլան ղաղ], Բնակիչք սորա ըստ մեծի մասին ցրուեցան յիզմիր։ Այս գիւղ թերես է նոյն ընդ Խոշակունի աւանին, զոր յիշէ Խորենացին» (Աշխարհագրութիւն չորից մասնց աշխարհի, Ասիա, հատոր Ա. էջ 267. Վենետիկ 1806)։ Իսկ Խրամի մասին հետեւեալն է ասում. «Տարաշամբու ի Հայոց սովորաբար կոչի Շամբ, ի հսումն կոչէր Խրամ, յորոյ իրը թարգմանու-

գաշտն, որոյ դլուխն Աժդահական, մինչեւ ցնոյն ինքն ամուրն նախճաւանայ, Բայց զնախասացեալ կինն Անոյշ բնակեցուցանէ որդւովքն իւրովք յանդորրութեան սպառուածի փլածի մեծի լերինն... իսկ պաշտօնեայն տայ Անուշայ ինոյն Մարաց, որ առ ոտամբ յերինն բնակեցան»<sup>1</sup>:

Եատ բնական է, որ Այրարատ նահանգի այդ կողմերում ապրող Մարաց անունով կոչուեր և երկիրը, մանաւանդ հայ ժողովրդից, ինչպէս ցարդ հասկացել են բոլոր հայ և եւրոպացի գիտնականները. բայց որովհետեւ այդ ժողովուրդը հայերից կոչուել է վիշտապազունք, ուստի Խորենացին անմիջապէս յարում է. «Յայտնեն զայս ճշշմարտապէս և թուելեացն երգք, զոր պահեցին ախորժելով, որպէս լսեմ, մարդիկ կողմանն գինաւետ գաւառին Գողթան, յորս շարին բանք երգոցն զԱրտաշիսէ և զորդոց նորա, յիշելով այլաբանաբար և զզարմիցն Աշդահակայ՝ Վիշտապազունս զնոսա կոչելով: զի Աժդահակդ ի մեր լեզուս է վիշտապ»: Խորենացու այս տեղեկութիւնը, թուում է, թէ հաստատում է նոյն թուելեաց երգերով, որոնցով անմիջապէս շարունակում է իւր պատմութեան թելք. «Այլ և ճաշ ասեն գործել Արդաւանայ ի պատիւ Արտաշիսի, և խարդաւանակ լեալ նմին ի տաճարին վիշտապաց: Այլ և Արտաւազգայ ոչ գտեալ ասեն, քաջի որդւոյն Արտաշիսի, տեղի ապսրանից՝ ի հիմնանալն Արտաշատու<sup>2</sup>.

Թիւն կոչեցին այլապիք Տարա կամ Տէրէ, որ է Խրամ, ձորտ... Գոյ աստէն մենաստան... սրբոյն Ստեփաննոսի» են (Անդ, Ա. էջ 269): Դիտելու է սակայն, որ Դարաշամբը Երասխի աջ ափին է, Պարսից Հայաստանում, մինչդեռ այժմ էլ Երասխի ձախ ափին Ռուսահայաստանում, Աստապատ գիւղի և Նախիջևանի միջև կան աւերակներ, որ աստապատցիք այժմ կոչում են Խուրում, որ հաւանօրէն Խրամ բառի աղաւաղումն է:

1. Խորեն. Ա., 1. 57—58:

2. Մոմզէնը մերժում է հակառակ Ստրաբոնի և Պլուտարքոսի, որ Հաննիբալը Հայաստան գնացած լինի և Հայոց Արտաշիասը նորա խորհրդով Արտաշատը հիմնած լինի (Theodor Mommsen, Römische Geschichte I, 749, Berlin 1881). բայց հաստատ է, որ Արտաշիասն է հիմնել, ինչպէս որ Հայոց Թուելեաց ժողովրդա-

կան երգն էլ վկայում է, որովհետև Ստրաբոնի ժամանակ էլ, որ ծնուել է մօտ 65 ն. թ. (և+24 Յ. թ.) թագաւորում էր Արտաշէս Բ. Տիգրան Բ. Մեծի որդին (32—20 ն. թ.): Այսպիսով, ինչպէս կարծում ենք, Խորենացու մի խոշոր շփոթութիւնն ես, որ գուցէ երգիրինն է: Հայո Մ. Խորենացու իւր Արտաշէս Բ.ի, կամ, ինչպէս սորան անուանում է, Տրդատ-Արտաշէսի յաջորդն են նորա որդիքը Արտաւազդ, Տիրան և Տիգրան (Բ. ԿԱ, ԿԲ, ԿԴ, ԿԵ), մինչդեռ ըստ օտար պատմագրների Աշխաղար—Աքսիդար—Էքսեդար, Պարթամասիր և Պարթամասպատ (Գաթըրճեանց, Տիեզերակ. Պատմ. Բ, ե, 173 շշ. Վիենա 1852:—Ա. Մ. Գարագաշեան, Քննակ. Պատմ. Հայոց Բ. ԺԲ, 250 շշ. Թիֆլիս 1895:—Գ. Ա. Խալատյանց, Օчеркъ Исторії Армениі XIV, 299 շշ. Մосква 1910) եալն:

Օտար աղբիւները Տրդատ-Արտաշէսի շրջանի պատմութեան առաւ են և կասկածից դուրս, մինչդեռ Խորենացունը—Հայոց վիպասանքը, արդէն շփոթել են և Տրդատ Արտաշէսից առաջ եղած Արտաշէսների գործերից շատերը վերագրել են նորան (Մ. Արեգեան, Հայ ժողովրդ. Առասպելները Մ. Խորենացու մէջ, ե, 1, էջ 315—325, Վաղարշապատ 1899): Հայ օտար աղբիւների Արտաշիաս կուսակալը 189—160 ն. թ. ունեցել է յաջորդներ՝ Արտաւազդ, Արտոյացիստոս, Տիգրան և Տիգրան Բ. Մեծ (W. Dolens et A. Katsch, Historie des Anciens Armeniens, V, 194. VII, 226. Genève 1907). սակաւ ինչ տարբեր է Գ. Խալաթեանցինը: Այս յաջորդներից բարեւութեամբ կարող էր վկայի մէջ նոյնանալ անի հետ. իսկ գոյն Խորենացու Տիրանից միայն մի տառով է տարբեր, որով մենք կստանանք իսկապէս Խորենացու Տրդատ Արտաշէսի յաջորդները շարքով: Աչքի է ընկնում և օտար աղբիւների Տրդատ Արտաշէսի վերջին երկու յաջորդների անուանց նմանութիւնը:

Խորենացին ուրեմն իսկապէս Արտաշիաս—Արտաշէսի յաջորդները դարձել է Տրդատ—Արտաշէսի յաջորդներ, որ նա կարող էր արած լինել իւր ծանօթութեանց հետ հիմնուելով և իրեն ծանօթ, բայց անվտանելի համարած Անանունի վերջին ցանկի վրայ (Մերէսս, Ա, 6, 10), որ ինքն իրօք մշակել է, ինչպէս այդ ցոյց է տուել բազմահմուտ հայագէտ Ն. Մառը (Օ начальной Истории Армениі Анонима), ի հարկէ ոչ թէ անպատճառ Անանունի հայ Արշակունի թագաւորների ցանկը գլխաւոր և կողմանակի ճիւղերի բաժանելով, քանի որ Խորենացու Բ, ա, 69 վկայութիւնը վերաբերում է Այրարադից դուրս ապրող Արշակունիներին (Բ, Ը, 81): Խորենացին հակառակ վիպասանքի Արտաշիասի փոխարէն Արտաշատի հիմնադիր համարելով Տրդատ Արտաշէսին, բնականաբար նորա որդիքն ու յաջորդները Արտաւազդ, Տիրան և Տիգրան համարել է վերջինիս որդիքը, մինչդեռ իրօք Տրդատ Ար-

նա անց, ասէ, գնաց և շինեաց ի մէջ Մարաց զՄ'արակերտ, որ է ի դաշտին, որ անուանեալ կոչի Շարուրայ»։ Որ վերեի վկայութեան մէջ երկիցս յիշուած «մեծ լեռոն» էլ Մասիսն է, տարակոյս արդէն չկայ, և Խորենացին իւր գիւտով հիացած իսկոյն յարում է. «Եւ արդ ոչ առաւել աստանօր զարմասցիս ի վերայ մերոյ ճշմարտապատմութեանս, թէ որպէս յայտնեցաք զանյայտ իրս վիշապաց, ողք են յազատն ի վեր ի Մասիս»։ Այժմ արդէն անտարակոյս Կորիւնից առած Խորենացու վկայութիւնը, թէ Մեսրոպ-Մաշտոցի Դողթն գաւառում քարոզութեան ժամանակ «Հալածական լեալ գեք մարմնաւոր տեսլեամբ անկանէին ի կողմանս Մարաց»<sup>1</sup> կարող է վերաբերել Մասիսից արևելք ապրոջ Մարաց, այնպէս և Տրդատ Բագրատունու վերաբերեալ խօսքը. «Եւ ինքն գնաց ապստամբեալ ի կողմանս ամիութեանն Մարաց», մանաւանդ որ անմիջապէս կցում է. «Եւ հասեալ ի Սիւնեաց աշխարհն»<sup>2</sup>, որ սահմանակից է Շարուրին և վերոյիշեալ վայրերից շատերին։

առաջէսի որդին կամ յաջորդն էր մեր զրոյցների Շիգարը, այն է Աքսիդար—Էքսեդարը, որի և Արտաւազդի զրոյցների նմանութեամբ միևնոյն անձն են համարւում այս երկուսը (Բաղմավէպ, 1906, էջ 56—59. Հմմտ. 1911, էջ 47. Վենետիկ)։

Մեզ թուում է սակայն՝ զրոյցների նմանութիւնները բաւական չեն այդ երկու անձերը նոյնացնելու. մինչդեռ զրոյցների փոխադարձ ազդեցութիւնն ու շփոթութիւնը հնարաւոր, որով և թերես, մանաւանդ թէ հայ և մար Հայոց թագաւորների շփոթութեամբ բացատրում է Արտաւազդի բնաւորութեան երկուութիւնը ըստ եզնիկի և Խորենացու։ Տրդատ—Արտաշէսն ունեցել է միայն մի յաջորդ Շիգար-Աշխադարը, իսկ Տիգրան-Տիրանը և Տիգրան Բ. Մեծը Արտաշիասի յաջորդներն են, եթէ ոչ որդիքը, ուստի և Արտաշիասի որդին և յաջորդ Արտաւազդը, մանաւանդ թէ վէպում նոյնացած Տիգրան Բ. Մեծի որդի և յաջորդ Արտաւազդի հետ Ահա այս Արտաւազդը գահազուրկ եղաւ և օտար երկրում—Եգիպտասոսում եղերական վախճան ունեցաւ և սա էր, որ գալու էր իւր նախորդների և երկրի փառքը վերանորոգելու. ինչպէս նման պարագաներում ֆրիդրիխ Բարբարոսան։ Բայց այս խնդիրների մասին այլուրեք։

1. Խորեն. Գ. Խէ, 237—238։

2. Անդ, Բ. ԿՊ, 141։

Արդ ուրեմն Հայաստանի գաւառը Մարաց աշխարհը ըստ Աղաթանգեղոսի վկայութեան հարաւում է, իսկ ըստ Խորենացու հիւսիսում՝ Արարատում. որին հաւատանք: Ինչպէս ասացի, բոլոր հայագէտ զիտնականները վերջինս են ընդունել ցարդ: Բայց մեզ այս հաւանական չէ թուում: և ահա թէ ինչու: Հայնրիխ Գելցերը ցոյց տուեց, թէ ինչպէս Խորենացին Տիգրան Ռ. Մեծին վերաբերեալ ժողովը դական զրոյցների ու երգերի գովեստների «թիւր զիտնականութեամբ» վերագրել է Տիգրան Ա. Հայկազեանին, Կիւրոսի ժամանակակիցին<sup>1</sup>. և ապա խնդիրն աւելի ընդարձակ և նորանոր ապացոյցներով լուծեց Մ. Աբեղեանը<sup>2</sup>. այնպէս որ ակամայ խնդիր է ծագում: թէ արդեօք այս մեր դէպում էլ Խորենացին չէ սխալւում:

Խորենացու վերեկի վկայութիւններից շատ պարզ երեսում է, որ Հայոց Թուելեաց երգերը Այրարատում՝ Մասիսից մինչև Նախճաւան բնակուած այդ օտար ժողովուրդը կոչում են «Վիշապազունք» և լիքն է, որ բացատրում է «զարմք Աշդահակայ», որ հաստատում է և այլ վկայութիւններով. «Արտաշիսի վերջնոյ զործք՝ ... յայտնի են քեզի վիպասանացն... շինել զքաղաքն... և իրը տրփանքն Սաթինկան ընդ վիշապազունսն՝ առասպելաբար, այսինքն ընդ զարմք Աշդահակայ, որ ունին զամենայն զառ ստորոտովն Մասեաց»<sup>3</sup> և յիշելով՝ իրեւ թէ այս Արտաշէսի որդի Արտաւազզի գործերն ու յայտնի առասպելն, ասում է «Այլ ոմանք ասեն և ի ծնանելն զսա զիպեալ պատահարաց իմն. զոր համարեցան կախարզել զսա կանանց զարմիցն Աշդահակայ»<sup>4</sup>: Այստեղից դեռ չի հետևում ի հարկէ, «թէ վիշապազունք են զարմք Աժդահակայ կամ մարք... ծանօթ է նաև ուրիշներին, որոնցից առնում է ինքն այդ

1. Համառոտ Պատմ. Հայոց, թարգմ. Գ. վ. Գալէմքարեան, էջ 8, Վիենա 1897:

2. Հայ ժողովրդ. Առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմութեան մէջ, Բ, էջ 448—510. Արտատպ. Արարատ Ամս. Վաղարշապատ 1901:

3. Խորեն. Բ, Խթ, 126:

4. Բ, ԿԱ, 199:

պատահարի «պատմութիւնը», ինչպէս անուշադրութեամբ եղրակացնում է Մ. Արեգեանը<sup>1</sup>, որովհետև «ոմանց առում են պատահարի և կախարդելու» մասին. իսկ «զարմք Աշդահակացն» բառերը անպատճառ այդ «ոմանց» չի վերաբերում, այլ հաւանօրէն Խորենացունն է, և եթէ այստեղ էլ ըստ իւր սովորութեան չէ կցում «այլաբանաբար» կամ «առասպելաբար, այսինքն» բառերը, հաւանօրէն այն պատճառով, որ առաջուց արդէն երկու անգամ ասել է: Թէպէտեական այս դէպքում շատ էլ էական չէ, թէ այս ուրիշներն էլ գիտեն, թէ ոչ, բայց այնքան աւելի հաւանական է, որ այլապէս նա չէր կարող պարծենալով իւր յայտնագործութեամբ ասել իւր մեկենասին. «Եւ արդ ոչ առաւել աստանօր զարմասցիս ի վերայ մերոյ ճշմարտապատմութեան, թէ որպէս յայտնեցաք զանյայտ իրս վիշապաց, որք են յազատն ի վեր ի Մասիս»<sup>2</sup>: Եւ երբ Խորենացին վերեկի «պատահարի» առթիւ մի երրորդ անգամ ասում է. «Եւ զայս նոյն երդիշըն յառասպելին ասեն, եթէ վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազզ, և զե փոխանակ եղին»<sup>3</sup>, անհերքելի կը մնայ, որ հայ ժողովուրդը միայն վիշապազունք գիտէ, որովհետև նորա «Թուելեաց երգերը», «վիպասանքը» և «երգիշները» այդ են գործ դնում: ուստի և ոչ միայն «զարմք Աշդահակայ» միայն Խորենացունն է: Կուցէ և «վիշապը», «տաճար վիշապաց» և «իրք վիշապաց» միայն Խորենացունն են և ոչ թէ ժողովրդական երգերինն, քանի որ երեք անգամ ևս «Վիշապազունքն է մեկնում: Եւ այդ հասկանալի է, որովհետև վիշապազունք միայն հայ ժողովուրդն ունի, մինչդեռ վիշապների առասպել կամ զրոյց շատ ուրիշ գոնեա հնդկակերուպական ազգեր ես. թէպէտեական անհնարին չէ, որ հայ վիշապասանները «վիշապազունք» և «վիշապ» միացնէին և այն էլ Մասիսի վրայ, որի վիշապների և շահմար օձի մասին ցարդ ևս ժողովրդի մէջ պատմում է:

1. Հայ ժողովրդ. Առասպելները, է, 329, տես Խորեն. Բ, կԱ, 139:

2. Խորեն. Ա, լ, 58:      3. Անդ, Բ, կԱ, 139:

Վիշապների առասպելի ծագման հիմունքն ընդհանուրապէս և մեր վիշապազանց Մասսի հետ կապուելն արդէն բացատրել է Մ. Արեղեանը<sup>1</sup>: Պատմական հիմքին գալով՝ եթէ նոյն իսկ այստեղ Մար=օձ=վիշապ ժողովուրդը գործունի, այստեղ ազդել են Արտապատականի Մարաց Արտաքազան թագաւորի, որ և արևելեան Հայաստանի վրայ է իշխել, և Հայոց Արտաշիասի, և իւր որդի Արտաւազգի, ինչպէս և Տիգրան Բ.-ի Արտաւազգ և այլ հայ և մար Արտաւազգների անցքերը և ոչ Արտաշէս Բ.-ինը, որ Մարերի հետ կոիւներ չեր կարող ունեցած լինել, որոնց իւր եղբայր Բակուրն<sup>2</sup> էր իշխում և Արտաւազգ, Տիրան և Տիգրան անունով որդիք չի ունեցել: Բայց մեզ ժուռում է, որ նախ և առաջ հայ վիպասանները վիշապազունք, գուցէ և վիշապ ասելով՝ հասկացել են Այրարատում ապրող ժողովուրդը, երեխ խալզիներին և սոյա արքայական Հարստութիւնը, որոնց տեղ յետոյ հայերը բռնեցին: Պատահական չէ ի հարկէ, որ Խորենացին վիշապազունքներին յիշում է Կիւրոսի ժամանակակից Տիգրան Երուանդեանի մասին խօսելիս<sup>3</sup>, որ ինչպէս Քսենոֆոնից յայտնի է, խալզերի դէմ կոիւ է մղել<sup>4</sup>, և եթէ Խորենացին անմիջապէս, ինչպէս և յետոյ խօսում է իւր Արտաշէս Բ.-ի և իրեն թէ սորա որդի Արտաւազգի և երկրորդական գահի մասին<sup>5</sup>, այդ անշուշտ Արտաշիաս և իւր որդին Արտաւազգն են, որոնցից առաջինը կոիւ ունեցած պիտի լինի և Խալզերի, ինչպէս և Հայաստանին տիրապետած Մարաց դէմ որոնք իրեւ հեթանոս-դեեր կարող էին վիշապազունների հետ նոյնանալ: Խորենացու վերջին վկայութեան «Վլշապազունք»

1. Հայ ժողով. Առասպելները, է, 2, 336—354: Հմմտ. Դ. 130—164. Ը, 449—510:

2. Մարանդի Բակուրակերտ աւանը, որտեղ Արտաշէս Բ. հիւանդացաւ և մեռաւ (Խորեն. Բ. է, 136) գուցէ այս Բակուրի շինածն է. ուր մեռաւ Տրդատ-Արտաշէսը, երեխ իր գնացել էր եղբօրը տեսութեան:

3. Խորեն. Ա, լ, 57—58: 4. Կիւրոպիդիա-Խրատք Կիւրոսի:

5. Խորեն. Բ, լիդ, 120—121. ԾԱ, 129—130. ԿԱ, 138—139.

գողացան զմանուկն Արտաւազդ և դեւ փոխանակ եղին» երգիչների խօսքից երեռւմ է, որ այդ բառերը նոյնանիշ են. իսկ վիշապ և դեւ կոչում են հին ժողովուրդները նուաճածած նոր հայրենիքի բնիկներին և առհասարակ թշնամիներին, այսպէս յոյն Հերակլէսը յաղթում է վիշապին և մաքրում է երկիրը հրեշներից, ինչպէս և թեսեսը և ուրիշները, իսկ Հայոց ամենասիրելի քաջութեան աստուած Վահագն էլ, որ Հերակլէսի զուգատիպն է, կոչում է վիշապաքաղ: Պարսիկները Դ.—Ե. դարերում հայերին կոչել են դեւ, ինչպէս Մոկացւոց<sup>1</sup> և Արշակին անուանում են «Ա.յ.ծից Հայոց արքայ»<sup>2</sup>, որ Հաւանօրէն դեւ է նշանակում: Հայոց մէջ այսօր «էծերն եկան» «ղեւերն եկան» հաւասար կերպով ասում են խռովիան և չարացող մարդկանց համար, և շատ ուրիշ ազգերի մէջ էլ ոյժը չարութեան գաղափարն է: Եւրոպայի ժողովուրդները գեռ պատմական դարաշրջանում՝ եւրոպացիք սկիւթացիներին, հոներին և սոցա յաջորդ թաթարներին դեեր, դեի ծնունդ և դժոխիքի ծնունդ էին համարում և կամ կոչում ելն: Այս հաստատուում է և ըստ Աժդահակի երազի. որով «Հայկազնց երկրի» «քարծր լեռնեն սաստիկ սառնամանիքներով պատած դագաթին» ծիրանազգեստ կնոջ ծնած զիւցազուններից երրորդը՝ Հայկազնեան ծիգրանը, «սանձելով անարի վիշապին»<sup>3</sup> Աժդահակի վրայ է արձակւում. որ «սանձուած անարի վիշապն» այստեղ չէ կարող Աժդահակի սերունդը նշանակել, այս պարզ է, քանի որ Աժդահակի սերունդի գաղթականութիւնը յետոյ է լինում: որի որդին է Վահագն Վիշապաքաղը: Գուցէ և Այրարատի նախնական բնակիչները հնում պաշտել են օձ, որոնց հետ ցարդ ևս հայ ժողովրդի հետ կապուած է տան բախտը և վիշապ<sup>4</sup>,

1. Խորեն. Գ, ԾԵ, 249—250: 2. Բուլգ. ԺԶ, 128:

3. Խորեն. Ա, ԻԶ, 52: 4. Յ. Մ. Գարագաշեան, Քննական Պատմ. Հայոց, Ա, Բ, § 3, Էջ 50—52, Թիֆլիս 1895:

5. Վոլթէրի Essai sur les moeurs et l'esprit des nations գլուխածքում ասուած է «Արարածների մէջ օձը պէտք է մարդկանց երկար ինչպէս մի բարձրագոյն մտաւոր էակ. ուստի և նա Եգիպ-

ուր ցարդ երկու վիշտապաձոր կայ: Այս ենթադրութիւնն ոյժ է ստանում շնորհիւ այն հանգամանքի որ, ինչպէս պատմեց ընկերս՝ Գալուստ Տէր-Մկրտչեանը, հայագէտ Ն. Մառը այս ամառ Գառնու մօտ «Ամդահայ իւրտ» կոչուած տեղում դտել է մինչև երեք մետր երկարութեամբ ձկների կամ վիշտապների արձաններ, որ անտարակոյս հայերից առաջ բնիկներից պաշտուել են<sup>1</sup>: Այս բոլորից յետոյ պէտք

տոսում և Յունաստանում անմահութեան սիմբոլն էր» (Th. Ache-  
lis, Moderne Völkerkunde I 2, 3, էջ 45. Stuttgart 1896):

1. Այս գրուածքը վաղոց արդէն պատրաստ էր, երբ Արա-  
րատ ամսագրի 1912 թուականին Մարտի համարում Ռ. Արքա-  
համեանի «Արևելագիտութեան վերջին խօսքը» յօդուածից տեղե-  
կանալով Մարի գրուածքի ճասին, դիմեցի նորան և շնորհակա-  
լութեամբ ստացայ հայագէտ Ն. Մառի «Կավказъ и Памятники  
Духовной Культуры», որից և առաջ ենք բերում խնզրիս մասին  
եղածն ամբողջապէս. «Գառնու հնախօսական շրջանում սիստե-  
մատիկ հետախուզումները, որ կապուած են երեանայ նահանգի  
Գառնու Բ. կամ Գ. գարում շինուած հոյակապ հեթանոսական  
տաճարի պեղումների հետ, հասցրին այն յայտնագործութեան, որ  
շրջակայ լեռներում երեան եկան ամենահազուագիւտ, առ այժմ  
աշխարհում միակ վիթխարի քարէ ձկներ (երեքից հինգ մետր  
երկարութեամբ). Ճուկ-հրէշներ: Այս ձկները երկու տեսակի են,  
մի քանիսը զլխով տեղական մուրզա ձկան տեսակ (նմանեցնում  
են և լոք ձկան), միւսները ճանար: Առցա վրայ կան խորաքան-  
դակներ, որ ցոյց են տալիս այս յուշարձանների պաշտամունքի նշա-  
նակութիւնը, պատկերացնում են մերթ գոմշի մարմնի և ոտների  
կաշու շերտ, մերթ եղանը իւր զլխով, — այս նշանակէ Առոծուն  
զոհաբերման: Պատկերը բարդանում է երբեմն ուրիշ մանրամասնե-  
րով, որոնք նոյնպէս պաշտամունքի նշանակութիւն ունին, այս-  
պէս, օրինակ, երբեմն թոշունների՝ կոռւնկների կամ արագիլների:  
Ճուկ հրէշները նշանակում են տեղական աստուածները «վիշտ-  
ները», որոնց մասին զրոյցներն իրեն մնացորդ պահպանուել են  
Հայոց ժողովրդական վէպում մինչև Բ.—Թ. գարը Յ. Ք. և աւելի  
ուշ: «Վիշտապներով մենք համում ենք կաւկասի կուլտուրպատ-  
մական հեռանկարին, որ բացւում է իրական յուշարձաններով: Աւելի  
հեռու չեն գնում և կովկասեան գերեզմանահատները: Այդ,  
երեսում է, որ յատակն է: Մինչև այդ խորքերը չեն համում և  
հեթանոսական գրութեան, սեպազրերի, յամենայն դէպս տեղա-  
կան վանայ սիստեմի, յուշարձանները: Վիշտապների վրայ կարելի-

է կարծել, որ ինչպէս հնդկական կրօնական այլաբանութիւնն չար ոգին աժի-դահական պատմական հիմք-ձև է ստացել, Մարաց թագաւոր Աստիազէս-Աժդահակի անուան նմանութեամբ, մեղնում էլ շնորհիւ Խորենացու լեզուազիտական մեկնութեան, որ շատ էլ ճիշտ չէ, որովհետեւ Աժդահակ=վիշապ Դահակ, իսկ աժդահա=վիշապ<sup>1</sup>. և աժդահա բառը այսօր էլ հայ ժողովուրդն գործ է ածում իրեւ մակդիր վիշապի և դեմ: Այս արդէն նշանակում է հսկայ, պարթե և շատ անզամ միասին պարթե-աժդահակամ աժդահա պարթե մարդ, որ երեխ կապ չունի ամենեին Մարաց հետ և ոչ էլ Աժդահակի հետ, որի հայկական տիպն է Արտաւազզը:

Վիշապազունք և դե նոյնանիշ էին, այդ արդէն տեսանք, որ հաստատում է և Եղնիկի վկայութեամբ, որ ասում է թէ «դիւցապաշտ» հայերի կարծիքով «Զո՞ն Արտաւազզ անուն արդելեալ իցէ ոիւաց»<sup>2</sup>: Դևերն էլ նոյնանիշ են քաջքերին, որոնք ինչպէս վիշապազունք ապրում են Մասիսում և ըստ Գողթան երգիչների Արտաւազզին այնտեղ փակել են. «Եւ եթէ դու յորս հեծցիս յազատն ի վեր ի Մասիս, զքեզ կալցին քաջք, տարցին յազատ ի վեր ի Մասիս, անդ կացցես և զլոյս մի տեսցես»<sup>3</sup>: Քաջքերն ու վիշապներն էլ միենոյն են. Վահրամ վարդապետն ևս Արտաւազզին կապողների համար ասում է. «Տեսեալ ոմանց քաջաց և վիշապաց տաճարս ի լերինս բարձունս... որք ասէին, թէ զԱրտաւազզ ոմն վիշապը արդելեալ են կենդանի ի Մասիս լեառն»<sup>4</sup>. և ապա ըստ Յայսմաւուրքի և վանական վարդապետի Արտաւազզին կապողներն աստուածք են»<sup>5</sup>:

Հէ ցոյց տալ զանազան տեսակի արտաքին ազդեցութիւններ, որոնք բարդացնում են Կովկասի բոլոր յետապայ խնդիրները: Նոքա արիական ցեղից առաջ են» (Извѣстія Императорской Академіи Наукъ, էջ 70. С.-Петербургъ 1912):

1. N. Hübschmann, Armen. Grammatik, էջ 32, Leipzig 1895:

2. Եղծ, Ա, ից, 105. Վենետիկ 1826:

3. Խորեն. Բ, կԱ, 139:

4. Դ. Ալիշան, Հին Հաւաքը, է, 194. Վենետիկ 1895: Հմմտ.

Մ. Արեգիան:

5. Խորեն. Ա, թ, 20,

Աստուածք անշուշտ դիւցազունների, կիսաստուածների, ոգիների մտքով է, ինչպէս էր և մեր Վահագնը վիշապաքաղը. ինչպէս երեխի վիշապներն և քաջքերը համարուել են ձռւկ-վիշապ պաշտող վիշապազունք՝ վիշապների զարմը: Մինչև իսկ գեռ մեր Արշակունիք իրանց դիւցազուններ են համարել. Հայոց Արշակունեաց հիմնադիր Վաղարշակը գրում է առ իւր եղբայր «Մեծն Արշակ արքայ Պարսից, որոյ անծն և պատկեր որպէս և է իսկ մեր աստուածոց»<sup>1</sup> և իւր նախնիքների արեին և լուսնին համապատիւ է համարել. «Մեծնան շինեալ յԱրմաւիր, անդրիս հաստատէ արեգական և լուսնի և իւրոց նախնեաց»<sup>2</sup>. իսկ Տրդատ Մեծը պարթևներին «դիւցախառն». «Ողջոյն... և ի մեր դիւցախառն պարթեւաց հասցէ այցելութիւն և ի փաւաց թագաւորաց և ի քաջ նախնեաց»<sup>3</sup>: Ազաթանգեղոսի այս վկայութիւնից երեւում է, որ դիւցախառն և քաջ հոմանիշ են. և քաջ ո. Գրքում թարգմանութիւն է Augustus, Sebastos, որ նշանակում են պաշտելի, այլ և յունարէն հերոս=դիւցազն բառին. ուստի և բնական է ենթագրել, որ քաջ, քաջք մեր Արշակունի արքաները և ուրեմն նոցա ոգիները լինին: Եւ այս այնքան աւելի հաւանական է, որ մեր աժդահա-պարթեւ Արշակունիների տունը ժողովրդական վէպում կոչւում է «Քաջանց տուն»<sup>4</sup>: Թողնելով այս մասին այլ առթիւ խօսելու կարծում ենք աւելի ևս հաւանական է, որ հայ ժողովուրդը իւր քնիկ՝ այսպէս կոչուած Հայկազանց հարստութեանց մասին միենոյն համոզմանն է եկել, որի ամենազօրեկ ներկայացուցիչ Տիգրան Բ. Մեծը դրացիներից անգամ «զօրութիւն մեծ» և «ողի» է համարուեր, իւր հայ ժողովրդից ոչ միայն երգուել, այլ նոյն իսկ «աստուած»<sup>5</sup> է կոչուել ըստ օտար վկայութեան անգամ: Այս էլ հաստատում է այնու, որ նախնի Հայոց

1. Խոր. Բ, Ը, 80: 2. Ազաթանգ. ԺԲ, § 127:

4. Ս. Կանայեանց, Զոջանց տուն վէպի երեք փոխանակ, էջ թ, 1. Վաղարշապատ 1910. Մշակ լրագիր 1909, թիւ 11. Թիֆլիս:

5. Դ. Կասիոս, ԼԶ, 52. Հմմա. Ս. Դ. Գուրագաշեան, Բ, թ, § 22, էջ 137–139. Թիֆլիս 1895.

«քաջութեան» աստուած «քաջ» Վահագնը<sup>1</sup> Տիղբանի որդին է Համարուել: Եւ թերեւս այդ Հայկազանց հարստութեան «Ոստանիկ» տան ժողովրդական կոչումն է, որ անցել է և պարթե Արշակունիներին, մանաւանդ որ Այրարատն նահանգը, որ վիշապազունների սեփականութիւնն էր, սոցանից մնաց Ոստանիկ տան, ինչպէս և վերջիններիցս Արշակունիներին ժառանգութիւն:

Գալով դեերին պէտք է ասեմ, որ սոքա կարող էին նոյնանալ վիշապներին ընդհանրապէս ինչպէս ո. Գրքում զեն վիշապ-օձի կերպարանքով խաբում է Եւային, այս պէս էլ Մասսի ցարդ յայտնի օձ-վիշապների զրոյցին, ապա և այդ լերան շուրջը բնակուած վիշապազանց յատկապէս: Սակայն ինձ թուում է, որ այստեղ դեերը ոչ միայն իրեւ չար ողիներ, այլ և իրեւ աստուածութիւն և քաջ ու բարի ողիներ միայն նոյնանիշ են դարձել քաջքերին, որոնք իրեւ Ոստանիկ և Արշակունի սիրուած ու պաշտուած հարըստութեանց ողիներ չեին կարող Հայոց համար չար համարուել, այլ պաշտպան առաքինի: Արդ դե բառը երկու նշանակութիւն ևս ունի: «Եւեստայում չար ողիները առհասարակ կոչում» daeva «դեմոն» (նոր պարսկ, *div*): Այս միեւնոյն բառն է, ինչ որ սանսկրիտ, *deva* «աստուած», *լատին*, *divus*, թեպէտեւ այս բառի նշանակութիւնը Աւեստայում ուղղակի հակառակն է սանսկրիտ *deva* բառի նշանակութեան: Գաթաներում ինչպէս և յետակայ Աւեստայում իրար հետ յիշում են даeva-դեերը ու տաշամարդիկ և даeva-ներն ու քրաֆտա-ները: Վերջիններս երեւում է համապատասխանում են աստուածաշնչեան «ծընունք իժից» մտապատկերին<sup>2</sup>, որ մեր վիշապազունքն է և նշանակութեամբ: Իսկ դե բառը իւր ձեւաւորումներով ցոյց է տալիս, որ մեզնում երկու պատկերացումն էլ կայ: Գրաբառի են մօտ տիւ, դիվ և դիցազն սանսկրիտի նշա-

1. Խորեն. Ա., 10., 59. Բ, ԺԲ, 85: Ագաթանգ. ԺԲ, § 127:

2. Grundriss der Jranischen Philologie, II. էջ 646, Strassburg

նակութեամբ, իսկ դե՛ Աւեստայի: Աւեստայի ըմբռնումը մեզնում ևս տիրող է եղել և դե նախ և առաջ նշանակում է չար ողի, սատանայ: Եատ վայրերում արտասանւում է տեւ-տեւ, մինչդեռ հասարակ ժողովրդի, մանաւանդ հեքեաթ-ներում և զրոյցներում, որ խորին հնութեան հետքեր են կրում: գեր-Ծեռ արտասանութեամբ՝ տարբեր է և նշանակութեամբ, որ եթէ երբեմն հրէշաւոր-հրաշաւոր է, բայց սովորաբար մանաւանդ մեր երկու ժողովրդական վեպի Զոջանց տան կամ Սասմայ ծռերի և Քաջանց տան գիւցազներգութեանց մէջ հսկայ մարդ է, միամիտ, շատ անգամ բարի և օժտուած գերմարդկային ուժով: Այսպէս չար-գեերը մեզնում Աւեստայի նշանակութեամբ կոչւում են ոչ միայն բոլոր հեթանոս ժողովուրդները՝ Մարերը<sup>1</sup>, կաւկասեան և Խաղտիքի ժողովուրդները այլ և հեթանոս հայերն իսկ<sup>2</sup>, մինչդեռ միւս կողմից քաջ-գեերը, այսպէս կոչենք, քրիստոնեայ հայ Մամիկոնեաններն, այլ և ուրացողները Քաջանց տան վէպում: իսկ Զոջանց տան Սասմայ ծռեր վէպում և օտար և «անհաւատ» Բաթմանայ Յուղէն, այսինքն Բուղան և մինչեւ իսկ Զարբախար և Յարատայ քամին<sup>3</sup>, այսինքն տարերային ոյժը, որոնցով անշուշտ մօտենում է սանսկրիտի գիւցազնական գաղափարին: Եւ ահա այս մօքով է անշուշտ, որ Մամիկոնեանք կապւում են քաջքերի՝ Քաջանց տան հետ: Բայց այս մասին այլ ուրեք: Եեշտենք միայն, որ այսպիսով ուրեմն Գողթան երգիչների՝ Հայոց վիպասանների գեւ-վիշապազունքները, էլ չեմ ասում դե քաջքերը, չեն կարող լինել գեւ-մարերը, որոնց այդ կոչումը աւելի քրիստոնէական է, մինչդեռ այդ երգերը, թէ Արտաշիասի և թէ նոյն իսկ Արտաշէս Բ-ին վերաբերեն, հաւանօրէն Հայոց քրիստոնէութիւն ընդունելուց առաջ են կազմուած:

1. Կորիւն, էջ 16, 21. Վենետիկ 1894: 2. Ագաթանգ. ձլ, § 778, 780. ձթ, § 784—785: 3. Դեհերի, քաջերի, ինչպէս և Մամիկոնեանց ծագման մասին ընդարձակ խօսել եմ իմ անտիպ Քաջանց տան վէպի Ուսուածքում և Յաւելուածում:

Խորենացու միւս հիմքը վիշտապազանց Աժդահակի ոերունդ լինելուն է Մուրացան նախարարութեան, որ «թագաւորութեան երկրորդն» է, մարական ծագումը և կալուածքները: Բատ Խորենացու Հայոց Արշակունեաց հիմնազիր Վաղարշակի «Յետ կարդելոյ զտուն թագաւորին, երկրորդ թագաւորութիւնն լինէր ի զաւակէ Աժդահակայ Մարաց եղելոյ թագաւորի», որ այժմ Մուրացանդ կոչեն: Քանզի ոչ ասեն նահապետի ազգին՝ Մուրացան տէր, այլ մարացւոցն տէր: Եւ թողու ի վերայ նոցա զամենայն շէնս, որ զերութենէն Մարաց»<sup>1:</sup> Նորա ասելով Երուանդի ժամանակ «Մուրացան ազգի տանուտէրն Արգամի» էր, որի պատիւը և կալուածքները խլեց Արտաշէս Բ.-ի որդի Արտաւազդը: «Իսկ Արտաւազդայ ոչ շատացեալ առնուլ ի բաց ի նոցանէ զերկրորդութեան պատիւն, յաւելու ևս հանել և զնախճաւան, և ըստ հիւսիսոյ Երասխայ զամենայն գեւզու, յորում և ապարանս և բերդս ի նոցանէ շինէ իւր ժառանգութիւն... և զրաւէ յինքն զշէնս և զամենայն իշխանութիւն նոցա»<sup>2:</sup>

Նախ այն ասենք, որ Հայոց արքաները Հայաստանում չեն ունեցել «երկրորդ» և «երկրորդութեան պատիւ»: այդպիսին, եթէ լինէր էլ կարող էին ոչ թէ աննշան Մուրացան նախարարութիւնը, այլ Մամիկոնեանք համարուել որոնք սակայն այդպիսի պատուանուն չեն կրել: Բայց այսպիսի պատուանուն կրել են Հայոց և Պարսից արքաները միւմեանց վերաբերութեամբ, ինչպէս հենց ըստ Խորենացու Հայոց Արտաշէս Ա.-ը, որ սկզբում «երկրորդական դաշնունէր», բայց «յառաջազէմ դառնալով» Պարսից Արշակունուց առնում է «նախագահութիւնը»<sup>3:</sup>, իսկ Տիգրան Բ. Մեծի ժամանակ ընդհակառակն է տեղի ունենում<sup>4:</sup>: Այսպիսի յարաբերութիւն կար Պարսից Վաղարշի ժամանակ, երբ սոլիա Բ. եղբայր Բակուրը Մարաստանի թագա-

1. Խորեն. Բ, Ը, 77. Հմմա. Մ. Արեգեան, է, 2, էջ 330—332:

2. Խորեն. Բ, ԾԱ, 129—130: 3. Անդ, Բ, ԺԱ, 83:

4. Անդ, Բ, ԺԹ, 92:

ւոր դարձաւ, իսկ կրտսերը Տրդատ—Խորենացու Հայոց Արտաշէս Բ.<sup>1</sup>՝ Հայաստանի, ինչպէս այդ ակնյայտնի երևում է Տակիտոսից<sup>2</sup>: Պարզ է ուրեմն, որ Խորենացին Հայոց Մուրացան նախարարութիւնը Մարաց հետ նոյնացնելով է նոցա երկրորդական պատիւը սոցա տալիս: Այսպիսով միայն բացատրւում է, որ Տիգրան Բ. Մեծին ենթարկուած իւր փեսան Փոքր-Մարտաստանի՝ Ատրպատականի Միհրդատ թագաւորն է, որ «երկրորդական գահ» է ունեցել, որին սակայն Խորենացին շփոթում է նորա աներ Միհրդատ Պոնտացու հետ<sup>2</sup>, միևնոյն ժամանակ հասկանալի է դառնում: Որ Հայոց Վաղարշակի և Արտաշէս Բ-ի ժամանակի Հայոց «թագաւորութեան երկրորդ» Մուրացան նախարարութիւնը դարձեալ Մարերն են և այդ միևնոյն Տակիտոսի վերոյիշեալ դէպքն է Խորենացու մէջ կրկնուած: Որովհետեւ, եթէ ըստ Խորենացու Վաղարշակն է Հայոց Արշակունեաց հիմնադիրը, իսկ ըստ օտար պատմագրերի սօրա եղբայր և Հայոց Տրդատ Ա. Խորենացու Հայոց Արտաշէս Բ-ը, ուստի և Գարագաշեանը սորան կոչում է Տրդատ-Արտաշէս: Հայոց վեպում զուրու է մզուել Տրդատ-Արտաշէսի անունը իւր աւելի հոչակաւոր եղբօր Վոլոգէս-Վաղարշի անունով, ինչպէս ճիշտ դիտել է Մարքուարտը<sup>3</sup>, բայց միաժամանակ պահել է Տրդատ-Արտաշէսի անգքերի մէջ յիշողութիւն, կաւելացնենք մենք, որ այդ միջոցին Ատրպատականի Մարաց հարստութիւնը Արշակունեաց երկրորդն է, իսկ զուտ Խորենացու Մուրացանեանը Մարերն են: Սակայն այս մասին այլուրեք:

Մուրացան նախարարութեան կալուածքներն ել պէտք է ըստ ամենայն հաւանականութեան հարաւում որոնելու որովհետեւ մեր միւս պատմագրներից թ. Արծրունին և յիշում է այս տոհմը թ., դարում Վասպուրականի իշխան-

1. Տարեգիրք, ԺԵ, Բ, 429. Վենետիկ: Հմմտ. A. v. Gutschmid, Gesch. Jrans, II, 129. Tübingen 1888. 2. Խորեն, Բ, ԽԴ, 121.

3. Г. Хадатъянцъ, Армянскій эносъ, № 245, Москва 1896. ZDMG, Beiträge zur Geschichte und Sage von Jran, 1895, Heft IV, № 628—673,

ների շարքին «Ամբատ Մուրացեան»<sup>1</sup>; Այս ապացոյցը կարծես թուլանում է, երբ ինկատի առնենք, որ միևնույն ժամանակ յիշում են Վասպուրականի և Հարաւային այլ նախարարութեանց հետ և անուններ, օրինակ Հաւնունի, Վահնունի, Դաբայեղին և Աբելինից տէր, որոնք Արարատումն էին ապրում: Սակայն Մուրացան «ազգը»<sup>2</sup>, որ յիշում է Հաւանօրէն Խորենացուն ոչ անձանօթ Վռամական գահնամակում ևս «կթ» Մարացեան»<sup>3</sup>, բայց զօրանամակում, Մուրացան<sup>4</sup> ձեռվ, զրուած է արեւմտեան դռան իսկապէս հիւսիսային արեւմտեան՝ վերջին իԱ. աեղում, թէև ըստ Ս. Օրբէլեանի «Հարաւային կողման»<sup>5</sup>, իսկապէս Հարաւ-արեւմտեան դռանն է պատկանում, բայց յիշուած է Մոկաց և Կորդուաց և առհասարակ Հայաստանի Հարաւում եղած նախարարութեանց շարքին: Եւ վերջապէս զարմանալի չէ, որ ոչ մի այլ պատմագիր չէ յիշում այս նախարարութիւնը Խորենացու ցոյց տուած վայրերում, մինչեւ իսկ Վարդանանց և Վահանանց պատերազմներին, ինչպէս և առաջ ու յետոյ ևս, երբ Մասիսի շրջակայքում և դէպի արեւելք Շարուր կորիւներ և պատմական անցքեր են տեղի ունենում: Բայց և ոչ մի այլ յիշատակութիւն կայ բացի Խորենացուց և Արծրունուց, որ սակայն Հարաւում է յիշում, ինչպէս տեսանք:

Այս ապացոյցներից յետոյ աւելորդ էլ է առել, որ եթէ Խորենացու «Մարացի» Մարք-Մարաց դասական սեռականից ծագաց ձեւը շատ նոր չհամարենք, ինչպէս վիրք-վրաց Վրացի, զոնեա պէտք է համարել վիպական ուրեմն և ժողովրդական Հայացի<sup>6</sup> արուացի<sup>7</sup> ձեռվ կազմուած, որին օգնութեան է եկել թերեւս Վռամական գահնամակի Մարացեան ձեւը, բայց որ այդ մի ժողովրդական լեզուագիւ-

1. Պատմ. Տանն Արծրունեաց, Բ, Զ, 109. Գ, իԱ, 235 Ա.

Պետերուրդ 1887: 2. Խորեն. Բ, Ը, 77 Հմմտ. Ա, Լ, 57—58:

3. Ղ. Ալիշան, Այրարատ, 439, ցանկը, Վճնեափկ 1890:

4. Յ. Շահիսաթունեանց, Ստորագր Բ, 48, ցանկը, Վաղարշապատ 1842: 5. Պատմ. Զ, 16 Մուկուա 1861:

6. Բուզ. Գ, լԱ, լԲ, 153: 7. Բուզ Գ, ի, 134:

տական բացատրութիւն է նման Յ. Մամիկոնեանի և նոյն իսկ Խորենացու մանաւանդ վիպական մասի, որ և յատուկ է այսօրուան Զոջանց տան Սասմայ ծռեր վէպին։ Մենք չենք ուզում մի վայրկեան նոյն իսկ հերքել, որ Խորենացին՝ որ գարու էլ հեղինակ ուզում է լինի—կարող էր իւր ժամանակի Մուրացան նախարարութեան անդամներից մէկն ու մէկից «Մարացւոց տէր» մեկնութիւնը լսած լինել, բայց որ այդ անհիմն է և հաւանօրէն ծագած Բագրատունի, Արծրունի, Մամիկոնեան և այլ նախարարութեանց նման իրանց արքայական և այն էլ հին ու պատկառելի ծագումը ցոյց տալու համար, շատ ակներեւ է, ինչպէս Միջին դարում եւրոպական ասպետական տոհմերն ևս հին ծագման ձըդումով վարակուած էին։ Յամենայն դէպս այդպիսի անհիմն և սնապարծ բացատրութիւնն ևս պէտք է ծագէր «Մարաց ամուր աշխարհի» կողմերում, Հայաստանի հարաւում ապրող մի նախարարութեան համար և ոչ Այրարատում, ուր, ինչպէս տեսանք, Մուրացան նախարարութիւն չկար։

Սակայն ըստ երեսյթին Թուելեաց երգերը հակասում են մեր այս պնդման. «Այլ և Արտաւազոյ ոչ գտեալ տսեն, քաջի տրդւոյն Արտաշիսի, տեղի ապարանից՝ ի հիմնանալն Արտաշատու, նա անց, ասէ, գնաց և շինեաց ի մէջ Մարաց զՄարակերտ, որ է ի դաշտին, որ անուանեալ կոչի Շարուրայ»։ Մենք մի կողմ ենք թողնում յայն շփոթութիւնը, որ Արտաշատը հիմնուել է ոչ թէ Տրտադ-Արտաշէսի այլ Տիգրանի. Մեծի նախորդներից՝ Արտաշիաս-Արտաշէս Ա-ի ժամանակ, գուցէ և ոչ Հաննիբալի խորհրդով, ինչպէս հակառակ Ստրաբոնի և Պլուտարքոսի պնդում է Մոմղէնը<sup>1</sup>, և դիտել տալիս, որ Մարաց և Մարակերտի Շարուրայ դաշտում լինելը ոչ թէ ժողովրդական երգինն է, այլ Խորենացունը. մի բացատրութիւն, որ մեզ համար առանձին արժէք չունի։ Եւ դուցէ թէ հիմնուած է ժողովրդական

1. Römische Geschichte, I, III, IX. § 749, δανιοθ. Berlin 1881:

երգի «Արտաւազդայ... տեղի ապսոյանից» բառերի վրայ:  
Եւ մեզ թուում է, թէ մի գուցէ Խորենացուն մոլորեցրել  
է է. դարու սկզբից արդէն յայտնի «Արտաւազդայ ապա-  
րանից» վանքը<sup>1</sup>, որ ի հարկէ Թ. դարու «Արտաւազդայ  
ապարանք», «անապատն» է<sup>2</sup> և կամ Ժ. դարում յիշուած  
«Արտավազ վանքը»<sup>3</sup>, բայց որ գտնուում է Եարուրից բա-  
ւական հեռու Ծաղկաձորի Թայչարուխ գիւղի մօտերքը<sup>4</sup>:

1. Գիրք թղթոց, էջ 151. Թիֆլիս 1901. Աւխտանէս, Բ, էջ,  
64. Վաղարշապատ 1871:

2. Ա. Օրբէլեան, Պատմ. I, 2, 127.—131, 147. Մուկուա 1861:

3. Մեսրով արքեպս. Սմբատեանց, Գեղարքունի, Ե, 365,  
Վաղարշապատ 1895:

4. Ալիշանը կարծում է, թէ «Արտաւազդայ ապարանքը» Ա-  
րագածոտն գաւառումն է. «Զի յիշի յելս Զ. դարու՝ բնդ այլոց  
աւանից գաւառին և Յովհաննիկ Վանաց երէց նորին» (Այրարատ  
ԺԵ, Բ, էջ 401<sup>ա</sup> ծանօթ. 1) որից առել է և Հ. Հիւրշմանը (Orts-  
namen. 409): Ալիշանի խօսքից երևում է, որ նա հիմնում է իւր  
այդ կարծիքը Գիրք թղթոցի և կամ Աւխտանէսի վկայութեան  
վրայ: Այս երկու գրուածքները ինչպէս շատ այլ գէպերում, որոնց  
մասին խօսելիք ունենք, այնպէս էլ այստեղ միմեանց ուղղում և  
լրացնում են: Ճշմարիտ է սկսեալ Գթ-ի «Արքահամ սրբոյ կա-  
թութիւնի [ո. կաթուղիկէի, Հմմտ, Սերէսս Գ, ԻԵ, 89: Սամ. Սնեցի  
268 Վաղարշապատ 1893] Վանից երէց, Սամուէլ [=ս. Անեցի,  
Կամովէղի]... Հոփիսիմիի,... Յովհաննու վանաց,... Օշականու,...  
Աղիվարդայ [ո. Եղիվարդայ],... Երենայ,... Գառնոյ, Յունանէս  
[ո. Յունանէս] Աւանի, Խօրայէլ Պտղավանից [ո. իւղ Պտղունից],...  
Երեանից [ո. Արամունից], Յովհանիկ Արտաւազդայ ապարանից,...  
Փարպիոյ,... Սղցից, Գիսգիս [ո. Գրիգորիս] Արճոյ, Կողմաս Աւր-  
դայ [Ուրծայ],... միւս Արճոյ,... Արծափաց,... Դատ աւանից [ո.  
Դարունից], Սամոտ Բագարանի [ո. Սամաս Բագրանի] մեծ մասը  
Արագածոտում են, բայց այստեղ կան և վայր Կոգովտում, և աւելի  
շատ Կոտայքում, ինչպէս են Երեան, Գառնի, Աւան, Արամունս  
որից յետոյ հենց յիշում է Արտաւազդայ ապարանքը: որից յետոյ  
դարձեալ յիշում են Արագածոտնի վայրեր: Մեզ թուում է՝ այս  
վկայութիւնից այդպիսի կարծիք հանելը հարկաւոր չէ. ընդհակա-  
ռակը կարծես թէ Արտաւազդայ ապարանքը Կաթուղիկէից ամե-  
նահեռաւորն է. մանաւանդ որ այս անունը յիշում է Օրբէլեանը  
և արձանագրութիւնները և Թայչարուխը Սամուն-Արամունսից հե-  
ռու չէ:

Գուցէ և կար այդպիսի անունով մի վայր Շարուրում ևս մեզ յայտնի չէ, որովհետեւ մի «Արտաւազուց»՝ գիւղ ևս կայ Սիւնեաց Գովատկան գաւառում, որ Շարուրից դէպի արեւելք, բայց շատ հեռու է ընկնում:

Բացի այդ մօռանալու չէ, որ Շարուրը դաշտ է, ինչպէս որ Խորենացին էլ կոչում է, մինչդեռ մեր բոլոր մատենագիրները Մարաց գաւառը կոչում են «ամուր աշխարհ» և «ամուր կողմանք», անշուշտ, ինչպէս և տեսանք, լեռնային երկիր լինելու պատճառով: Եւ եթէ մի վայրկեան անդամ անկարելին ենթադրենք, թէ այդ զաշտի շրջապատի լեռները վեհապանձ Մասիսով տային Շարուրին և իւր շրջակայքին մի այդպիսի մակղիր, մանաւանդ որ այդ կողմերում ինչպէս և Յարդող լեռնաշղթայում ապրում են եղջիներ և մահմեդական քրդեր, որոնք ոչ միայն մեր ազգային աւանդութեամբ<sup>2</sup>, այլ և ըստ Մորգանի<sup>3</sup> հին մարերն են համարւում, պէտք է առարկել սակայն, որ քըրդերն առհասարակ Հայաստանի հարաւից դէպի հիւսիս շատ ու շատ ուշ են անցել: Առաջին անգամ «Քրդաստան» է կոչւում «Ամֆայ գաւառը» Ժ. դարում և «քուրդ

1. Ստ. Օրբէլիան, Պատմ. լ. 153. Մոսկվա 1861,

2. Թ. Մեծորեցի, Պատմ. 43—44 և 108. այլ և 27, 70, 84—85 և 82 Փարիզ 1860: Այսուղ քուրդ և մար խառն, ապա և ջոկ ջոկ գործ են ածւում: Մեղ տակաւին յայտնի չէ աւելի հին վկայութիւն այս մեզնում տարածուած համոզմունքի համար:

3. J. Oppert-ը իւր «Le Peuple et la langue des Mèdes, Paris 1879, աշխատութեան մէջ Մարաց լեզուն թուրանական էր համարում. սակայն A. Delatre, S. J. իւր «Le Peuple et l'Empire des Nèdes, Bruxelles 1883 երկասիրութեամբ ցոյց տուաւ, որ այդ զուտ արիական է և իրանական ձիւղին է պատկանում: Քրդերի մեղտկան ցեղերից մէկը լինելու մասին հաստատուն կարծիք է յայտնել Fr. B. Charmoy իւր Cheref Nâmeh ou Fasfes de la nation Kourde par Cheref—on'ddin, St-Pétersbourg 1868—75 թարգմանական եռահատոր աշխատութեան մէջ, Ա, էջ 300—310: Ապա և J. de Morgan-ը իւր Mission Scientifique, tome V, Etudes linguistiques, էջ 5—6, Paris, 1904 և Les Premières Civilisation. էջ 333. Paris, 1909 աշխատութեանց մէջ: Աղբիւրների այս ցուցմունքը պարտական ենք պ. լ. էօին:

ռայիս» յիշում է նոյն ժամանակ վասպուրականի թոռնեան գաւառի սահմանակից Հեր և Սաղամուստ գաւառներում<sup>1</sup> և հետեւեալ դարերում միայն այդ անունով հայիշխաններ Այրարատում, ուստի և ոչ մի հեռաւոր կապ անգամ չունին շատ աւելի ուշ Սիս-Մասիսի շուրջը այժմ բնակուող Եղիշ-Կուրմանջ քրդերը ոչ մեր վիշապազանց և ոչ էլ Մար-Քրդերի հետ, ինչպէս կարծւում է<sup>2</sup>:

Այն էլ անուշադիր թողնելու չէ, որ նոյն իսկ հայ վիպասանների խօսքը Արտաւազդի մասին «Նա անց զնաց... և շինեաց ի մէջ Մարաց զՄարակերտ» ցոյց են տալիս մի շատ աւելի հեռաւոր վայր, քան Արտաշատի համարեա քթի տակ գտնուած Շարուրը, որ ինչպէս տեսանք, Խորենացու բացատրութիւնն է: Ինչպէս ժամանակաբանական այնպէս էլ աշխարհագրական չափազանցութիւններ շատ են պատահում թէ հին և թէ նոր ժողովրդական երգերում շատ անգամ նման անունների շփոթութեամբ, բայց երբեմն էլ այդ ժողովրդական ասացուածքի մի ձեւ, արտայայտութիւնն է, որ շատ հեռու չէ ճշմարտութիւնից: Դեռ մեր օրերում երգում էին Սուրմալիում

Զօրքը քաշեց սարի հովը,

Գնաց հապաւ Վանայ ծովը.

Իւր քաջութեամբ Տէր-Ղուկասով:

Շատ շհարներ նա անց կացաւ,

Կայուր պալատն ուրախացաւ

Ուրախութիւն Տէր-Ղուկասով, ևն:

Արշակ Տէր-Ղուկասեանն, ինչպէս գիտենք, Արշակերտի հովտով անցել է միայն մի քանի աննշան քաղաքագիւղեր, իսկ Վանայ ծովը ի հարկէ չէ հասել, բայց և այնպէս շատ էլ հեռու չէր:

Մեր ցարդ բոլոր ասածներից պարզ երեսում է, որ Այրարատում Մարաց ամուր աշխարհ կամ գաւառ, ինչպէս և Մարակերտ չկայ, այլ հարաւում գուցէ Վասպու-

1. Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 144, 60 և 91, Վաղարշապատ 1898:

2. Սիոն վ. Տ. Մանուկիսան, Եղիշի-Կուրմանժ, Ալալցիս, 1910:

բականում։ Այս ենթադրութիւնն աւելի հաւական է դառնում, եթի ինկատի ունենանք, որ ըստ մի այլ աւանդութեան «Մար Աժդահակի զարմի» ընակութեան տեղը Աղբակն է համարւում։ Թ. Արծրունին՝ պատմելով Կիւրոսի դաշնակցութեամբ Տիգրանի կույն Աժդահակի դէմ յարում է։ «Յայց երկուք ոմանք ի զաւակէ Սշդահակայ ձերբակալ արարեալ Տիգրանայ առեալ ածէր ի Հայս, և կացուցեալ զնոսա ի կարդի ստրկութեան, որոյ [որոց] զփոյթ հպատակութեանն ցուցեալ կարգէ զնոսա ի գործ ծառայութեան կրել արծուիս և բազէս, և զինարբուսն ի տեղի մատուակութեան յառաջացուցեալ ի զահ նախարարութեան ձգեալ կացուցանէ, և ընակեցուցանէ զնոսա ի գաւառն Աղքագ, յիտ ընակեցուցանելոյ զնոսա ի Քողախել, ի Վընջունիս և ի Հախրսմի, տեսեալ մինչև ի ժամանակս ինչ, քանզի յառաջադրյն տուեալ էր զնոսա ի ծառայութիւն քեռ իւրոյ Տիգրանուհեաց կնոջ Սշդահակայ, յառուցեալ տեղիս ընակեցուցանելով»<sup>1</sup>։

Այստեղ Մուրացան նախարարութեան մասին և ոչ իսկ ակնարկ կայ. մինչդեռ Արծրունին «արծուեկիր և բազէակիր» ասելով երեխ հասկանում է Արծրունեաց նախարարութիւնը, իսկ զինարբու-մատուակ՝ զնունեաց. որով ինչպէս ճիշտ զիտում է Մարքուարդը, «Թովման այստեղ ինքն իրան հակասում է, եթի Արծրունեաց և Գնունեաց նախնիքը դարձնում է ազգական Աժդահակի ընտանիքի... մինչդեռ Արծրունիներին նա Ա, ա, էջ 8 [և Ա, զ, 44] համաձայն կեղծ Մ. Խորենացու Սենեքերիմի որդիներից է ծագեցնում»<sup>2</sup>։ Միւս կողմից նա մի բոլորովին նոր տեղեկութեամբ «Սշդահակի զաւակներից ոմանց» Տիգրանուհուն ծառայութեան տալով՝ փոխանակ սոցա ընակեցնելու նախ Աղձնից՝ Արծրունեաց նախնական հայրենիքը<sup>3</sup>, որտեղ էր և Տիգրանակերտը<sup>4</sup>, ուր Տիգրանը «Յուղարկէ թաղաւորապէս զքոյր իւր Տիգրանուհի մեծ ամբոխիւ ի Հայս, յաւանն»

1. Պատմ. Ա, Ե, 38:

2. Eransvahr, էջ 177, ծանօթ. 2:

3. Խորեն. Բ, Ը, 80:

4. Բուդ. Դ, Իդ, 146. Ե, Իի, 227:

զոր շինեաց իւրով անուամբ Տիգրան, որ է Տիգրանակերտ, և զգաւառսն զայնոսիկ ի ծառայութիւն նմա հրամայէ»<sup>1</sup>, — հետեւելով Խորենացուն Աժդահակի ընտանիքը նախ բնակեցնում է Զողախել [Զուղա, Խոշակունիք], Վրնջունիք և Հախրամի [Նախճաւան, Խրամ] և յետոյ Արծրունեաց նոր հայրենիք Աղբագ: Այստեղից կարելի էր հետեւեցնել, որ Աժդահակայ զարմի Արծրունեաց հին հայրենիքում՝ Աղձնիքում ապրելու մի աւանդութիւն կար, մինչեւ իսկ Արծրունիները, ինչպէս և Գնունիները Աժդահակի այդ զարմից ծագած են համարուել, ինչպէս տեսանք. բայց ինքը Արծրունին համարում է այդ Արծրունեաց նոր հայրենիք Աղբագ: Արծրունու պատմագրութեան մ.ջ կան և այլ նման հակասութիւններ, որ ծագում են ի հարկէ մեզ տակաւին գուցէ ընդմիշտ անյայտ մնացած աղբիւրներից, ինչպէս կը տեսնենք, ուստի շարունակենք Աժդահակի զարմի գաղթականութեան մասին դեռ լսել նորան: Արծրունին

1. Խորեն. Ա., 1, 57:—Արդարե կայ երկու Տիգրանակերտ Միւսը՝ երկրորդը հիւսիսում, ըստ ամենայն հաւանութեանց Աւտիքում (Սերէոս, Գ, իջ, 92 Ասողիկ, Բ, Գ, 115. Ս-Պետերբուրգ 1885), Եւ եթէ Տգուակերտը (Մ. Կազմնկայտուացի, Բ. հատոր, Գ, Ը, 21, Փարիզ 1860—Տգուակերտ, Գ, Ը, 241, Մասկուս 1860) և այժմեան Թուգրնակերտ-Թառնակերտը (Մ. Զալալեանց, Ճանապարհորդութիւն, Բ, 345, Տփխիս 1858) կազ ունին Տիգրանակերտ անուան հետ, որ անհաւանական չէ, ապա այդ կարող է լինել ի հարկէ «միւս» Տիգրանակերտը: Սակայն պէտք է գիտել, որ Խորենացին միայն մի այն էլ առաջին Տիգրանակերտը գիտի հարցաւում (Պատմ. Գ, իջ, 212), որ իւր «Տիգրան Հայկազնի» շենածն էր (Գ, ԽԸ, 214—215): Եթէ Տիգրան Ա.-ը Այրարատին տէր էր, հաւանօրէն նա այստեղից գուրս ոչ հիւսիսում և ոչ էլ մանաւանդ հարաւում այդքան հեռու իւր անոնվ քաղաք շինել կարող էր: Ամիզն էլ Տիգրանակերտը չէ, ինչպէս կարծել են մեր յետակայ պատմագիրները (Վարդան, ԺԶ, 34, Վենետիկ 1862. Մ. Ռուհայկի, 15, Վաղարշապատ 1898) և կրկնում է Զամչեանը (Ա. 196), այլ Մարտիրոսաց քաղաք-Նիբրկերտ-Մուֆարղինը՝ Աղձնիքում. ինչպէս ապացուցել են Լեհման-Հառլապտ և Բելկ գերմանացի գիտնականները: Հմմտ. N. Hübschmann, Altarm. Ortsnamen, Tigranakert, էջ 473—475:

խօսելով Արտաշէս Բ.-ի թագաւորութեան միջոցին Արծրունի Սահակի մասին ասում է. «Սահակ որդի Վաչէի կացեալ ի զրան Արտաշեսի շքեղ և երեելի ճգնութեամբ, յոր ձեռն հաւատաց Արտաշէս զգաւառն Աղբազ, զի յայն վայր ոմանք ի զարմիցն Աշղահակաց Մարի ընակէին անդ, արք քաջք, կորովազէնք և զիպազեղունք...» Յայց կին ոմն յազգեն Աշղահակայ բնակէ յամուրոն Զլմար և ի Սրինդ, ի գաւառին ի փոքր Աղբազ, և յանուն [անուն] կնոջն Զայլամար, որ և զամուրն յիւր (անուն) անուանէ. և ունէր կինն զանձ բազում և նորա գուստը մի Անուշ անուն, առնու զնա Սահակ կնութեան հրամանաւ Արտաշեսի, և կնքեալ աշխարհն հաստատէ Սահակայ ի սեպհական ժառանգութիւն. այս աղագաւ խնամ տարեալ թագաւորին կնոջն՝ զի ոչ ել առ երուանդ և ոչ միով իւիք պաշտպանութեամբ» :

Այս վկայութեամբ ևս Արծրունին «Մար Աշդահակի զարմի» մասին կրկնում և հաստատում է իւր նախընթաց վկայութիւնը, յայտնելով միայն, որ սոքա ապրում էին փոքր Աղբակում ուր յատկապէս յիշւում է հարուստ կին Զայլմարը «յազգէն Աշդահակայ» և սորա գուստը Անուշը, ըստ ամենայն հաւանականութեան Խորենացու Աժդահակի և սորա կին Անոյշի աւանդութեան տարբեր փռփռխակն, ուր և յիշւում է Արտաշէս Բ.-ի յարաբերութիւնը «Աժդահակի զարմի հետ», իսկ Խորենացին այդ կապում է Մուրացան նախարարութեան հետ: Մինչդեռ Թ. Արծրունին, որ յիշում է Մուրացեան-Մուրացան նախարարութիւնն այդպիսի բան չգիտէ: Այսպէս թէ այնպէս չնայելով Արծրունու հակասութեան և Խորենացուց ունեցած տարբերութեանց մի բան շա «պարզ է այս երկու վկայութիւններից, որ Թ. Արծրունու Աժդահակի և սորա զարմի զրոյցը միենոյնն է, ինչ որ Խորենացունը, այն խոշոր տարբերութեամբ, որ մինչդեռ ըստ Խորենացու Աժդահակի զարմը բնակում է Այլարատ նահանգում ըստ Արծրունու հա-

բաւում՝ Վասպուրականի Աղբակ և կամ Մեծ Աղբագ գառւառում և Կորճայքի-Հայերից համարետ միշտ և օտարներից մի միայն իւր յայտնի Կորդուաց անունով կոչուած<sup>1</sup> նահանգի Փոքր Աղբակ գաւառում։ Հետաքրքրական է, որ հենց Աղբակը ըստ Պլինիոսի գտնւում է Մարաստանում<sup>2</sup>, իսկ Տիգրան Բ. Մեծի նուաճած երկրներից միայն Կորճէք-Կորդուացն էր, որ մնաց Հայաստանին։

Ազքի է ընկնում, որ Հարաւում յիշուում են անուններ, որ կան հիւսիսում, մասնաւորապէս Այրարատում։ Այսպէս Զողա լեռ<sup>3</sup> Ճախուկ բերդ ու գաւառ<sup>4</sup>, որ յիշեցնում են մեզ Զուղան և Ճահուկ-Ճահրին. նոյն իսկ Մարի գաւառ և Տամսէթ-Տամբեր գտնւում են և Հարաւում, թէև Պարսկահայք նահանգում<sup>5</sup>։ Եւ արդեօք աշխարհապրական յատուկ անունների նմանութիւնները ազդեցութիւն չեն ունեցել միևնոյն անցքն ևս հարաւից հիւսիս փոխազրելու։ Այսպէս էլ Տրդատ Արտաշէսի և Հռադամիզդ-Երսւանդի պատմական անցքերը, որոնք ըստ Խորենացու տեղի են ունենում Այրարատ նահանգում և հազիւ միայն յիշուում է Տրդատ-Արտաշէսի փախուստը «ի կողմանս Հերայ ի հոգուանս Մաղսազանի»<sup>6</sup>, ըստ Թ. Արծրունու միայն Հեր և Զարեւանդի և Վասպուրականի կողմերում<sup>7</sup>։ Եւ համարեա թէ այս անցքերի բոլոր աշխարհագրական անունները կրկնւում են հիւսիսում և Հարաւում։ Այրարատում է Մասիսի Հանդէպ Արտաշատը, որի շինութիւնը Խորենացին Տրդատ-Արտաշէսին<sup>8</sup> է վերագրում, Արտիմէդ<sup>9</sup>, Մարամատ=Մարմէտ<sup>10</sup>, Մարաց մարգ<sup>11</sup>,

1. Դ., Խնձիձեան, Ստորագր. 2. Հայաստանի, 138—142, Վենետիկ 1822։ 2. H. Hübschmann, Ortsnamen, 335—336։

3. Թ. Արծրունի, Գ, Գ, 143։ 4. Անդ, Գ, Բ, 135. Գ, ԻԹ, 260, 263 ևն։ 5. Ortsnamen, 338։

6. Խորեն, Բ, ԼԹ, 117—127. Հմմտ. Բուզ. Դ, 1, 152. Խէ, 162։

7. Պատմ. Ա, Է, 50—51. Բ, 52—54։ 8. Խորեն, Բ, ԽԹ, 126։

9. Խորեն, Բ, ԿԵ, 144. 10. Անդ, Բ, ԽԶ, 123. Գ. Տէր-Մկրտչեանը հիմնուելով արձանագրութեանց վրայ հնթաղրում է, որ ուղղագոյն ձեռն է Մարմէտի (Անանիա Շիրակացի, էջ 15, Վաղարշապատ 1896. Արտատպ. Արարատ ամսագրից)։

Երուանդաւան<sup>1</sup>, Երուանդաշատ<sup>2</sup>, Երուանդակերտ<sup>3</sup> և Երուանդաքար<sup>4</sup>; Նոյն կամ նոյնպիսի անուններ կան Վասպուրականում; Երուանդունիք գաւառ<sup>5</sup>, Երուանդականք,

1. Անդ, Բ, ԽԶ, 123; 2. Անդ, Բ, ԼԹ, 117. Գ, ԼԱ, 218=քաղաք Երուանդայ, Բ, ԽԶ, 123, ԽԸ, 125, ԽԹ, 127 և Ղ, 177; 3. Անդ, Բ, ԽԲ, 118; 4. Ասողիկը (Պատմ. Ա, Ե, 47, 48) Երուանդաշատն այդպէս է կոչում Անհաւանական չէ Ե. Դիւլորիէի այն կարծիքը, որ Երուանդաքարը Երուանդաշատի «ներքին ամրոցը» կամ ինչպէս սովորաբար միջնաբերդն է այդպէս կոչուել, բայց որ Երուանդաշատն և Երուանդակերտը միևնուն քաղաքը լինէին (Ասողիկ, ծանօթ. 56, Էջ 333—334) անհիմն է, քանի որ Խորենացին պարզ որոշում է, Երուանդաշատը Երասխի և Ախուրեանի խառնարանի մօտ (Խորեն. Բ, ԼԹ=Երուանդաքար Ասողիկի, Ա, Ե,) կողքի մօտ, որ Խորենացին կարծես ուզում է նոյնացնել Մարամատ-Մարմէղի հետ, ուր էր մարաց մարգ հովիտը և Երուանդավան գաշտը (Խորեն. Բ, ԽԶ), մինչդեռ Երուանդակերտը այժմեան կարակալան պիտի լինի՝ նայելով Խորենացու նկարագրին (Խորեն. Բ, ԽԲ):

5. Մ. Խորենացու «Աշխարհացոյցը» ունի Երուանդունիք, Երիթունիք, Երուանթունիք և Թ. Արծրունին՝ Արուանթունիք (H. Hübschmann, Ortsnamen, 343): Առաջին ընթերցուածքն է ճշշտագոյնը, քանի որ Ղ. Փարպեցին ևս ունի Երիցս «Ներսին Երուանդունի» (Գ, Լ, 127—127, Թիֆլիս 1904); Զօրանամակն ունի Երանթունի (Յ. Շահնամաթունիան, Սարուազր. Բ, 58) իսկ Վասպական գահնամակը՝ «Ծարանթունին» (Ալիշան, Այրարատ, 431), որ անշուշտ նոյն Երուանդունին է։ Իայ գրի թոյի փոխուելը մանաւանդ յատուկ անուանց մէջ արդէն շատ յայտնի է, բայց յաճախ պատահում է ևս, որ ուն ևս դասնում է մէն և ընդհակառակը: Այս փոփոխութիւնը զանազան եղուական ընտանիքների մէջ ևս տարածուած ընդհանուր ձայնագիտական երեսյթ է. այսպէս Յ և Յ, Թ և Ծ միայն հնդկոսպական ընտանիքի թրուկ-փոխական ճիւղում, այլ և եղիպտերէնում ևն (Լ. Յ. Մշերյան. О такъ называемыхъ «Ванскихъ»—урартскихъ лексикальныхъ и суффикальныхъ элементахъ въ Армянскомъ языке, Էջ 9, ծանօթ. 27. Москва 1902); Հայերէնի համար տես Հ. Марръ, Грамматика древнеармянского языка, этимология, § 36, Էջ 29. С-Петербургъ 1903); Հայերէնում կան և այլ օրինակներ, Կաղզուան=Կաղզան, Արդան=Արգամ (Խորեն. Բ, ԾԱ, 130) և արդեօք Աւեստայի Զայրի Վայրի անունը Հայոց Զայրմայրը չէ: Մինչև իսկ բայց բառերի սկզբ-

**Մարմեղ<sup>4</sup>**, Արտամէտ կամ Արտամատ<sup>2</sup> և Արտաշէսեան գաւառ<sup>5</sup>:

Ապա ազքի է ընկնում և այս հանգամանքը. եթէ Ազատ Մասիսում արգելուած է Արտաշէսի որդի Արտաշագը, Վասպուրականի Տոսպում և կամ Ազուաւաքարում փակուած է Մհերը<sup>3</sup> իրանց հայրերի անհճքով. աւանդութիւններ, որ եթէ միւնոյնն էլ չեն, բայց շատ նման են: Վերջապէս ուշադրութեան արժանի է և այն, ինչպէս ըստ Խորենացու Այրարատում Արտաշատի դիմաց բարձրանում է Ազատ Մասիսը, այնպէս էլ ըստ Թ. Արծրունու Արտամատի հանդէս է «մեծ լեառն Մասիք»: Վերջինս համարեա բառացի առնում է առաջինի Ազատ Մասիսի նկարագրութիւնը<sup>5</sup>, թեպէտև զիտէ, որ Երասիի մօտ են «Այրարատեան ազատն Մասեաց լեռները, ուր Արտաւազզին Արտաշէսեան քարավիժեալ խոհամանայր ի կոշտն կոհակին<sup>6</sup>: Արծրունու «մեծ լեռ Մասիքը» ի հարկէ Վա-

րում, մեծանում=վենձանում (Տ. Նաւասարդեան, Հայ-ժողովրդ, հէքիաթներ, Ե, Թոռչու տղէն, էջ 48, Տփխիս 1899):

1. Հ. Հիւրշմանի Die Altarmen. Ortsnamen աշխատութեան քարտէզն ունի Վանից հիւսիս համանուն կամ Կարասու գետակի ափին «Մերմիդ», սակայն ժողովուրդն երգում է. «Աստուած քեակէր քէօ Մարմէտ»: Այսպէս է կոչում և Միբախորեանը (նկարագրական ուղևորութիւն ի հայարնակ գաւառու Արևելեան Տաճկաստանի, մասն Բ, ԾԴ, էջ 278, Կ. Պոլիս 1885):

2. Յովհ. Մամիկոնեան, Պատմ. Տարօնոյ, Ա, 13, Վենետիկ 1889:—Թ. Արծրունի, Գ, Բ, 130, 131 և Ա, Ը, 54. սակայն սորավերջին ձեւ ազգուած է Խորենացուց (Բ, ԽԶ, 123. ԾԵ, 135): Արտամէտ-Արտամէտն է անշուշտ Արծրունու, Արտաշէսեան աւանը (Գ, ԺԸ, 215), մինչդեռ Հ. Հիւրշմանը, ինչպէս երկում է Ortsnamen, 345, 508—409) տարբեր վայրեր է համարում: Այսպէս էլ Խորենացին Երուանդաշատը կոչում է «Դաստակերտ Երուանդայ», ապա և «Մարմէտ», թէև վերջինս թւում է, թէ այլ վայր լինի (Պատմ. Բ, ԽԶ, 123): «Գեղեցիկ դաստակերտ» կոչում է և Երուանդակերտը (Խորեն. Բ, ԽԲ, 118):

3. Ortsnamen, էջ 345: 4. Ա. Կանայեանց, Զոջանց տան Պատմականը, Արարատ ամս. 1908, էջ 123—124, Վաղարշապատ:

5. Խորեն. Ա. ԺԲ, 25—27: 6. Թ. Արծրունի, Գ, ԽԹ, 254:

բագայ լեռը չէ, ինչպէս կարծում է Ինձինեանը<sup>1</sup>, այլ  
Սիփանը<sup>2</sup>: Այս դէպքում առանձին նշանակութիւն էլ  
չունի այդ, որովհետև եթէ առաջինի մասին վկայում են  
Նոյեան տապանն ընդունելու աւանդութիւնը, երկրորդին  
ևս կարող էր իրրե Մասիսի յարմարուել մանաւանդ որ  
Այրարատում այժմ Սիսի մասին այն են տօնմա, ինչ որ  
Սիփանի<sup>3</sup>: Հենց տապանի լեռը որի հետ կապուած է և  
քաջքերի ծագումը<sup>4</sup>, ըստ մեր գրականութեան հարաւում՝  
կորդուաց լեռ է, իսկ ըստ ժողովրդական աւանդութեան  
Հիւսիսում՝ Մասիսը:

1. Ստորագրութիւն Հին Հայաստանի, էջ 190, ծանօթ. 2:
  2. Հ. Հիւրցմանը՝ առանց ի նկատի ունենալու Արծրունու այս վկայութիւնը, հիմուելով Ա. Սուքրու կարծիքի վրայ (ԽՍՍ, էջ 31,) ընդունում է, որ Բզնունեաց «Նեխ Մասեղը», ինչպէս և Ապահունիքի «մեծ լեառն Մասեաց» (Բուզ. Գ, ի, 52) Սիփան լեռն է և հաստատում է Ղ. Ինճիճեանի Յայսմաւուրքից առած վկայութեամբ (Oatsnamen. 324, 370, 396, 489): Այս առնուած է Սոփերք Հայկականից (ԺԹ, Ե, 33—34, Վենետիկ 1854). որ նոյն պէս Բզնունիքումն է դնում: Գուցէ թէ «Նեխ»=նեղ, որ Սիփանին տրուած լինի իրեն հակադրութիւն «ազատ» Մասսի (Հայկազ. Բառ. «Նեղ» իցէ լեառնդ եփրեմի» ևն):
  3. Գարեգին Մրուանձտեանց, Գրոց Բրոց էջ 56. «Նոյա տապանն եկաւ ի Սիփան, ասաց—Սիփան, առ զիս, առ զիս.—Սիփանն ասաց, զնա ի Մասիս, զնա ի Մասիս, որ մեծ է քան զիս, որ բարձր է քան զիս» (Մ. Արեգ. Հ. Ժողովրդ. առասպելները, ԺԱ, 573):
  4. Ղ. Ալիշան, Հին Հաւատք... Հայոց, Ե, Բ, 208, Վենետիկ 1895: Այսպէս և Շուտոնիքը (Արարատ Ամսագիր 1905, էջ 210. Վաղարշապատ):

Բ.

Նոյեան տապանի աւանդութիւնը. լեռը Հայաստանի հարաւում՝ Կորդուաց աշխարհում, ըստ օտար հեղինակների մանաւանդ Հիերոնիմոսի Այրարատ նահանգի լեռները. Մասսիսը շատ ուշ է յիշւում իրբե տապանի լեռ. Ասորական աւանդութիւն, Բուզանդարան և այլք. Հայկական գրաւոր աւանդութեամբ է. դարուց Մասիսը տապանի լեռ. Հայ հեղինակների մինչև ժԲ. դարու լուսութեան պատճառը: Մասիսն ըստ հնագոյն անգիր աւանդութեան ևս տապանի լեռ:

Մեզ թուում է, որ Հենց Նոյեան տապանի լեռան աւանդութեամբ զլխաւորապէս կարելի է բացատրել Խորենացու սխալը, որով նա Վիշապազունքն Աժդահակի զարմբացատրելով՝ Մարաց աշխարհը ինչպէս և Մարակերտը հարաւից հիւսիս՝ Այրարատ է փոխազրել: Այս պատճառով ստիպուած ենք առ ժամանակ փոքր ինչ հեռու թափառել:

Ասուածանչի խօսքը. «Եւ նստաւ տապանն... ի լերինս Արարատայ»<sup>1</sup>, որ կոչւում է և «Երկիր Արարադայ»<sup>2</sup>, ոռվորաբար հասկացուել է մեր Այրարատ նահանգը, որից և Ազատ Մասիսը յետոյ սխալմամբ կոչուել է և Արարատ, մանաւանդ օտարներից: Սակայն Քերովիէ Պատկանեանը երկար ու մանրազննին հետազօտութեամբ գալիս է այն եզրակացութեան, որ այլ է Հայոց Այրարատ-Արարատ երկիրը՝ Արաքսի հովիտը և այլ ու Դրքի և Արսորւոց Արարատ-Արարադը: Ըստ Սեմական հեղինակների «Արարարատ»՝ մի լեռնային երկիր, գտնւում է Վանայ և Ուրմիոյ լճերի հարաւային կողմերը, ուր անցնում են լեռներ, որոնք իրար հետ միացնում են Տաւրոսի և Զազրոսի ճիւղաւորութիւնները», ուրեմն «Հարաւային Հայաստանը, հետնառած Քուրդաստանի լեռները, որոնք բաժանում են Հայաստանը Միջագետքից»<sup>3</sup>, որ և Հաստատուում է սեմական

1. Ծառաղբ, լ., 4; 2. Զորբորդ Թազաւորութեանց, ԺԹ. 37:

3. Կ. Паткановъ, Вавекія Надписи и значение ихъ для Исторіи передней Азіи, III, էջ 71, 77, 89, 92—104. С-Петербург. 1881:

և սոցանից առնուած Հայոց հեղինակների վկայութիւններով<sup>1</sup>:

Եւ Ֆրիդրիխ Մուրադը, որին անյայտ է Ք. Պատկանեանի աշխատութիւնը, ապացուցանում է, որ Աստուածաշնչի Արարատը ոչ թէ լեռ է, այլ երկիր<sup>2</sup>, որ է Ուրարտու-Արարատ-Հայաստանը<sup>3</sup>, բայց որ հրէական յետագայ մեկնաբանութիւնը բարելոնական աւանդութիւնից ազդուած մօտաւորապէս Բ. դարուց Յ. Ք. համարել է Կարդու երկիրը, Հայոց կորդուացը: Այս աւանդութիւնն էլ ազգելով ասորական ո. Գրքի Պելեթոյի թարգմանութեան վրայ՝ երայական բնագրի Արարատը Ծնունդը լ, 4 և Ես. լէ, 38 թարգմանուած է Կարդու, մինչդեռ Զորը. Թագաւոր. ԺԹ, 37 և Երեմ. ծԱ, 27 պահուած է Արարատ: Իսկ Եփրեմ Խուրի Ասորին († մօտ. 373) խառն գործ է ածում Կարդու, Արարատ և Հայաստան, իրեւ նոյնանիշ: Ասորական այս աւանդութիւնն էլ անցել է մահմեդականներին. Ղուրանում սուրիա 11, 46 Բոհտանի լեռնաշղթայի Զերէլ-Զուղի գագաթը համարւում է տապանի լեռ.—այժմ Զեղիրէթ քաղաքի մօտ ցոյց են տալիս իրեւ թէ նոյի շինած Թեմանին զիւղը—իսկ ըստ քրդական լեռների բնակիչների Քրդաստանի ամենաբարձր շղթան՝ Թուրա-Զելուն<sup>4</sup>:

Այնուհետև հերքելով նէօլդեկէի և Բուգդէի ասորական զրոյցի նախնական լինելու հիմունքները, ընդունում է Դիլմանինը, որով ասորականն ազդուել է բարելականից, քանի որ Ա. Բազմավէպն՝ առնելով Բերոսոսից աւանդում է, թէ Քոիսութրոսի (Նոյի) նաւն ազատուեց մի լեռան վրայ. «Եւ թէ տեղին... Հայոց աշխարհն է: Եւ ի նաւէն որ չոքաւ դադարեաց ի Հայս, և ցայժմ սակաւ ինչ մասն

1. Խորեն. Ա., Ժ, 22. ԺԱ, 23. հմմտ. Սերէոս Ա., դպր. 2—4. Զորը. Թագաւոր. ԺԹ, 37 և Ես. լէ, 38. հմմտ. Խորեն. Ա., իջ, 48—49 և Սիմ Լիուան կամ լեռների «Խոյթ» մասում ապրող «Սահամայց» Սասունցւոց մասին Թ. Արծրունի, Բ. է, 119—121:

2. Arzrat und Masis. Studien zur Armenischen Altertumskunde und Litteratur, von Friedrich Murad, I, էջ 1—5. Heidelberg 1901.

3. Անդ, II—III. էջ 5—26; 4. Անդ, IV, 26—30:

ի կորդուաց լերինն ի Հայոց աշխարհին մնալ նշխար առեն»<sup>1</sup>: Եւ բարելական աւանդութեամբ տապանի իջած երկիրն ու լեռը չընդունելով Ուեւանգիզը, համարում է բարելական Խորատափի հիւսիսում ընկած Կորդուաց շղթան, որին հաւանօրէն պատկանում էր և Նիզիր երկիրը, ուր ըստ սեպագրերի հասաւ Շամաս կամ Սիտ-Նապելտիմի նաւը: Մուրադը ճգնելով ցոյց տալ բարելական այս երկու սեպագրերի և Բերոսոսի զրոյցների, մանաւանդ ու Գրքի և բարելականի տնկախութիւնը միմեանցից և հիմք առնելով Արարատ անուան հայերէն ձեր և այն հանդամանքը, որ Արարատի լեռները որոշակի կոչում են Նոյեանտապանի տեղը և մարդկութեան նոր որբանը, ենթադրում է, թէ Հայոց Այրարատ գաւառը պէտք է լինի Ջրհեղեղի զրոյցի նախնական հայրենիքը և նոյն իսկ անցքերի հանդիսավայրը:

Այս խնդիրներ են, որոնց մասին հակառակ և տարբեր կարծիքներ<sup>2</sup> կան. այսպէս ըստ Շանտայի<sup>3</sup> «ի լերինս Արարատայ» բացատրութեամբ հասկանալու է մի յատուկ լեռ կարդու-կորդուաց լեռների մէջ, որ սեպագիր արձանագրութեանց մէջ Arardi=Արարդի կը կոչուի<sup>4</sup>, և որ այլ ևս ստոյդ չէ համարում Այրարարատ, Արարատ, Ուրարտու կամ Ուրաշտու անունների նոյնութիւնն, ինչպէս կարծել է Հ. Հիւրշմանը<sup>5</sup> և այլն, որով արդարանում է և Պատկանեանի սրամիտ զիտողութիւնը. բայց այս խնդիրները մեզ չեն վերաբերում:

1. Eusebii Chronicon arm.-lat. ed. P. J. B. Aucher, Venedig 1818, Pars I, էջ 31—37. Հմմտ. Eusebii Chronicorum lidridake, ed. A. Schoene, Berlin 1875, vol. I. Col. I, 19—23:

2. Ե. Տէր-Մինասեան. Բարելոն և Ա. Գիրք, էջ 19—24.

Ա. Էջմիածին 1908. և Historia Sacra antique Testamenti, quam concinnavit Dr. Dr. Nermanus Zschokke. Editio sexta emendata etinstructa octo delinationibus et tabula Geographica. Vindobonae et Lipsiae, G. Braumüller 1910. Տես «Հանդէս Ամս.» 1910, էջ 382, Վիենա:

3. Ararat, Untersuchungen zur Kunde des alten Orients, Berlin 1902. 4. Հմմտ. Döller, Studien, տես «Հանդէս Ամս.» 1910, էջ 382:

5. Անդ, էջ 382.

Մեզ համար էականն է աւանդութեանց գոյութիւնը. իսկ յատկապէս կարեօր է այն հարցը, թէ Հայերն ունեի՞ն տեղական ջրհեղեղի զրոյց: Յ. Մուրադը յիշելով Խորենացու Հայոց պատմութեան մի վկայութիւնը Ա., զ. «Քոիսութրայի ի Հայս «Նաւելու» անդիր զրոյցը», որ «Հինքն Արամազնեայք» բամբռամբ երգում էին, զիսում է. «Այս աեղ ի հարկէ խօսքը չէ կարող միայն բարելական ջրհեղեղի զրոյցին վերաբերել, այլ սորա նման հայ ժողովրդական այլ զրոյցի, որ Խորենացին պարզապէս ակնարկում է, առանց ի հարկէ մանրամասնութեանց»: Եւ առհասարակ Հայոց գրականութեան զրոյցների աղքատութիւնը վերտպրելով Էռևսաւորչի և յաջորդների կրօնական նախանձաւորութեան, եղրակացնում է, որ Հայերը չեին կարող չունենալ սեփական ջրհեղեղի զրոյց, երբ զրացիները և ցեղակից փռիւզացիք ունեին<sup>1</sup>:

Այս հիմունքների վրայ աւելանում է Հերովդէս Մեծի ժամանակակից Նիկողայոս Դամասկացու վկայութիւնը, որով տապանի լեռ է «Մինուաղայից վերև Արմենիոյ մեծ լեռը Բարիս»<sup>2</sup>: Մուրադը Մինուաս-Մինուազան համարում է Մանսա երկիրը<sup>3</sup>, իսկ Բարիսը—ըստ Սէն-Մարտէնի Բագ-

1. Ararat und Masis, VII, 43—46. III, էջ 9:

2. Josephus, Ant. Jud. I, 95 11, 3, 6). Opera ed. B. Wiese 1, էջ 22. Ք. Պատկանեանը դիտում է. «Եղօւ բառը յունաց մէջ նշանակում էր եղիպտական կուր, լաստ. իսկ բանաստեղծական լեզուում՝ ընդհանրապէս նաւակ: Նոյնը կարելի է ասել և գրգռու գաղաթի մասին, որ գտնում է Վանայ ծովի հիւսիսային արևելան կողմում: Արաբերէն Կորիտը, ասորական կարկուրա բառից, նշանակում է մեծ նաւ: Առանձին նշանակութիւն չենք տալիս այս բանին, բայց կարծում ենք, որ շատ անդամ յատուկ անուան նշանակութիւնը տաիթ է տալիս աւանդութեան ծագման» (Վանեկիա Հաճութ, III, 102, ծանօթ.):

3. Մեզ աւելի հաւանական է թուում Սէն-Մարտէնի կարծիքը (Mem. sur l'Arménie I, 250, որով Մինուասը նա համարում է Մանուաղեան գաւառը Վանայ ծովի հիւսիսային կողմում (Է. Պատկանօվէ, Վանեկիա Հաճութ III, 82): Այս դէպքում Բարիս լեռը կարող էր համարուել Ապահունիքի Մասիս-Միփան գաղը (Բուզ. Գ, ի,

րեանդի Ալարազ լեռը—Հայերէն բարձր բառը, մակղիրն Աղտատ Մասիսի, Պարսիկների Կուշի Նուշը, որ Հայոց համար հնուց ի վեր սուրբ լեռ է<sup>1</sup>: Մի այլ ապացոյց ևս համարում է ֆ. Մուրադը Յովսեպսի վկայութիւնը, որով տապանը կանգնել է Արմենիոյ մի բարձր լեռան կատարին և Հայերը նոյի բնակութեան տեղը կոչում են՝ Առօթա՛քրօյ<sup>2</sup> իջևան, որ նա համարում է Հայոց նախիջաւան անուան թարգմանութիւն. թէև այս երկու հիմունքների դէմ էլ առարկում է հայագէտ Ֆ. Ն. Ֆինկը<sup>3</sup>: Այս երկու հիմունքներով, մանաւանդ Յովսեպսի վրայ յենուելով Մուրադը եղրակացնում է, թէ Հայերը ունեին Մասի հետ կապուած ջրհեղեղի զրոյց և գեռ Քրիստոսից առաջ Հայաստանի Հրէաների միջոցաւ ծանօթ էին Ս. Գրքի Ջրհեղեղի պատմուածքին, որով և տեղականն ու երրայականը ձուլուեցան. թէ Մասիսը պիտի լինէր այդ լեռը, հետեւում էր Հայոց համար ըստ ինքեան Ծննդոց զրքի վկայութիւնից<sup>4</sup>:

Իրեւ վերջին փաստ Ֆ. Մուրադը յիշում է Հիերոնիմոսի 408—410 թուականներին զրած Եսայու մեկնութեան (lib. XI. cap. XXXVII, V, 37, 38) վկայութիւնը, թէև այլտեղ Մասիսի անունը առանձնապէս չէ յիշուած. «Ararat autem regio in Armenia campestris est, per quam Araxes fluit, incredibilis ubertatis, ad radices Tauri montis, qui usque illuc extenditur. Ergo et Arca in qua libertatus est Noe cum liberis suis, cessante diluvio, non ad montes

52), որ Մուրադն անուշազրութեամբ (VIII, 51) Աղտատ Մասիսն է համարել: Ինչպէս Սիփանի այնպէս և Գրգուռի մասին (Վանսկիա Հաճութ, III, 102) կայ տապանի հանդիպելու աւանդութիւնը. «Գրգուռ, առ զիս.—Գնա ի Մասիս», են:

1. Ararat und Masis, VII, 47—49. VIII, 50—61. Հմմտ. և

Բ. Պատկանեան:

2. Antiq. Jud. I, 90 22 (1, 3, 5). Opp. ed. Wiese, Vol. I, § 21.

3. Zeitschrift für Armen. Philologie, I Band, II Heft, 174—176, Marburg 1902:

4. Ararat und Masis, X, § 61—66:

*generaliter Armeniae delata est, quae appellatur Ararat, sed ad montes Tauri altissimos, qui Ararat imminent campus»<sup>1</sup>: Հ. Գելցէրը այս համարկում է «օտար գիտնականների մի համեմատութիւն», որ շատ ուշ—յամենայն դէպս թ. կամ Ժ. դարուց ոչ կանուխ—Հայաստան է մտել»<sup>2</sup>: Բայց Մուրադն առարկում է, որ «Հիերոնիմոսը Հայերին մի անծանօթ մեծութիւն» է, որ երբեք Հայաստանում եղած չէ. ուստի սա ոչ թէ մի նոր կարծիք է յայտնում, այլ հաստատում է մի իրական, գրաւոր կամ բերանացի աւանդութիւն, որ նորան դիպան է թուում:*

Սակայն Հայոց գրականութեան մէջ, շարունակում է Մուրադը, Մասիսը տապանի լեռ յիշւում է շատ ուշ։ Նախ ձառնատիրներում—մեծ մասամբ ԺԱ—ԺԲ դարերում խմբագրուած, ապա և Յովհաննէս Երզնկացին (մօտ. 1250—1326) յիշում է «Բարձրակառոյցն Մասիս, տեղի հանգըստեան... տապանին»<sup>3</sup> և ոորա հետը կապուած զրոյցն իբրև յայտնի հնուց ի վեր ծանաշուած իրողութիւն։ Մինչդեռ մեր բազմաթիւ հեղինակները մինչեւ ԺԲ. դարը չեն յիշում այդ չնայելով որ նոյի, ջրհեղեղի և տապանի մասին խօսում են. և շատերը դիտեն, որ Հայաստանը մարդկութեան ք. որրանն է։ Զափազանց աչքի է ընկնում և Գ. Նարեկացու լուռթիւնը, չնայելով որ նորա Յակովը Մծբնացուն նուիրուած ներբողեանում տապանի զիւտը իբրև մեծ և նշանաւոր հրաշք փառաբանւում է. և էլ աւելի տարօրինակ է Վարդան վարդապետինը, որ ընդարձակ նկարագրում

1. «Իսկ Արարատը, Արմենիոյ մի անհաւատալի պտղաբեր դաշտային գաւառն է, որի միջով հոսում է Արաքսը, Տաւրոս լեռան ստորոտներումն է [գտնւում], որոնք տարածում են մինչեւ այնտեղ [Արարատ]: Ուրեմն և տապանը, որով ազատուեց նոյը իւր որդուց հետ, Ջրհեղեղը դադարելուց յետոյ, նստաւ ոչ թէ առնասարակ Արմենիոյ լեռների վրայ, որ կոչւում է Արարատ, այլ Տաւրոսի բարձրագոյն լեռների. որ իշխում են Արարատի դաշտերի վրայ»:

2. Realencyklopädie für protestantische Theologie und Kirche 1897, Armenien, էջ 64—65. Տես Ararat und Masis, X, 67—68:

3. Սովիերք Հայկ. Ե. Ներբողեան ի ս. Լ. Հայոց Գրիգորիոս, էջ 124, 127. Վենետիկ 1853, Murad, 69.

է Այրաբատը, դիտէ Այրիվանքումն է «Տախտակն ս. տապանակին Նոյեան նահապետին» և «ի Նախչուան տապան է, մեծ նահապետին Նոյի»<sup>1</sup>, սակայն Մասսի անունն անգամ չէ տալիս, թէև իւր նախորդներին ձառընտիրներից և իւր ժամանակակից Յ. Երզնկացուն ծանօթ իրողութիւնն է այդ: Ակներև է, ասում է Մուրադը, որ սխալ կլինէր Հայոց մատենագիրների լոռւթիւնը ապացոյց համարէինք, թէ տապանի տեղը նոցա յայտնի չէր:

Սակայն և այնպէս այս պարագայի վրայ հիմնուած, շարունակում է Մուրադը, Ալիշանը պնդում է, թէ Հայերը մինչև ԺՅ, դարը Մասսիսը տապանի լեռ չեն համարել և այդ որոնել են Կորդուաց աշխարհում. այսպէս էլ Հ. Գելցէրը՝ ի նկատի ունենալով լոռւթիւնը Դ. Փարպեցու Արարատեան նահանգի նկարագրութեան և Խորենացու աշխարհագրութեան ու պատմագրութեան, ուր առիթը պահած չէր: Մանաւանդ որ Բուզանդարանում թակովը Մըծրնացին «տապանն Նոյեան շինուածոյն» գտնում է «ի լեան Սարարադայ ի սահմանս այրարատեան տէրութեան ի գաւառն Կորդուաց»<sup>2</sup>, որ հաստատում է և Թ. Արծրունին<sup>3</sup>:

Բայց Մուրադը երկար քննագատութիւնից յետոյ ճզնում է ցոյց տալ, որ այժմեան Բուզանդարանը խմբագրուել է և. դարուց ոչ առաջ, երբ մտել են բազմաթիւ, զլիսաւորապէս ասորմկան աղբիւրներից առնուած լեզենդաներ, միտումնաւոր յաւելուածներ և ընդմիջարկութիւններ, որոնցից պիտի լինի և Բուզանդարանի վերոյիշեալ գլուխը<sup>4</sup>. մանաւանդ որ միենոյն աւանդութիւնն ու Սարարադ շինծու անունը գտնուում է Խորենացուն վերագրուած «Պատմութիւն Հռիփսիմեանց» զրուցախառն գըրուածքում, Է.—Ը. դարու գործ. «Եւ... գնացեալ ընդմէջ Կորդուաց ընդ լեառն Սողով, ի բերկրացւոց գաւառին...: Բայց այսր լերինն ասի յԱսորւոց... եհաս տապանն ի գլուխ

1. Saint-Martin, Mémoires hist. et Géogr. sur l'Arménie, Tome II, 420, 422. Paris 1819. Murad, էջ 70:

2. Բուզ. Գ, Ճ, 22, 24. Murad, 71—72: 3. Պատմ. Ա, ա, 19:

4. Ararat und Masis, X, 72—84:

լերինն, որ է Ասրարադայ. և ընդ մէջ անցեալ սղոցաձուկն արգելու զնաւն. և անուն քաղաքագեղջն կոչեցաւ Թըմիսիա այսինքն թէ ութ ոզիք ելին ի տապանէն»<sup>1</sup>:

Իսկ մեղ թուռում է առանց Բուզանդարանի խմբագրութեան ծանր խնդիրը յարուցանելու ևս—որ մեղ հաւանական էլ չէ թուռում<sup>2</sup>—կարելի է միենոյն եզրակացութեան հասնել ըստ էութեան, որին հասել է Մուրադը: Ակնյայտնի է, որ այս վկայութեան մէջ բացի ասորականից կան և այլ աւանդութեանց հետքեր<sup>3</sup>, և ակնարկներ. Հեղինակիս «ասի յԱսորուց» խօսքից հետեւում է, որ նորան մի այլ և հաւանօրէն հայկական աւանդութիւն ևս յայտնի էր: Եւ այս հաստատում է Մուրադին անձանօթ մնացած

1. Խորեն. 297—303. 2. Գ. Տէր-Մկրտչեան, Փաւստոսի Զեռագրերը, Zeitschrift für Armenische Philologie, Band II, Heft IV, 267—286, Marburg 1904: Ե. (Դիշէ) Մ. (աղաթեան), Փաւստոս Բուզանդ, Վիեննա 1890: Գր. Տէր-Պօղոսիան, Նկատողութիւններ Փաւստոսի պատմութեան վերաբերութեամբ, Վիեննա, 1901: Ստ. Մալիսասիան, Մի նկատողութիւն Փաւստոսի պատմութեան մասին». Armen. Philologie, Band I, Heft 1, 64—66: Հ. Մարք. Անոնիմъ, Բիզант. Временникъ, 1894, II, 295—302:

3. Թըմիս մահմեղական աւանդութիւնից է ի հարկէ. աւելի հետաքրքրական է հետեւեալը. «Bemerkenswert ist in dieser offenbar sehr alten syrischen Sage der Sägefisch, der an den babyl. Oannes erinnert (Dillemann, Genesis, 6 Aufl. Էջ 138) und dessen Auftreten eine gewisse Ähnlichkeit mit der Rolle hat, die in den indischen Flutmythus nach der älteren Erzählung in der Catapata Brâhmaṇa Brâhma in der Gestalt eines gehörnten Fisches spielt, indem er Manu in der Sintflut rettet. Manu bindet ihm nämlich das Tau des Schiffes, in welchem er sich befindet, an das Horn und der Fisch eilt damit «nach dem nördlichen Gebirge» hin; dort wird nun das Fahrzeug an einem Baum gebunden, die Stelle aber, wo man landet, leisst «Manus Niedergang» (IV, 29): Պիտոյից գրքի «Պարսա լերինն» (Զ, գ, թ, դ, թ, Էջ 457—460. Վիեննա. 1865) գլխում յիշուած է «Հիւսիսային լեռ», որ է «Բարձողն... զարկածս ջրհեղեղին (X, 71—72):—Յոյն հեղեղնակները կորդուաց կողմերը յիշում են «Սոլոփիա գաւառ, ուր և հիմայ այլ կայ Պիրքէ տեղ կամ զեղ մի՛ համաձայն Բերկրացւոց, որ պէտք էր գրուել Բերկրացւոց... օրինակ մալ զրէ Բագրացւոց» (Արուսահլ Հայ, Պատմ. Եկեղեցիաց և Վանօրէից Եղիպտոսի, է, Էջ 60. Վիեննաիկ 1895):

մի այլ հեղինակի խօսքով։ Տիրանուն է, դարու սկզբում՝ ապրող հեղինակն ասում է. «Եւ Տապանն նոյի ի Կորագուս ի Սարարագ՝ լերինն է, և ոչ ի Մասիս. ի Մասեաց գնացք աւուրց քսանից, աւելի կամ պակաս. որպէս կայտ ոչ<sup>2</sup> ի զրի վասն Թմանուն լերինն, որ թարգմանի ութ, որ էին ի տապանին ի ձեռակերտին նոյի. որում հանդերձեցաւ Յակոբ յԱսորւոց գալ տեսանել»։ Տիրանունի խօսքերից ևս պարզ է, որ եթէ ոչ է, դարից առաջ, գոնեանորա ժամանակ վէճ է եղել արդէն տապանի լեռան մասին։ Յակոբ և Սարարագ անունները, ինչպէս և վերջինս ու Թմանուն անուան մեկնութիւնը ցոյց են տալիս, որ նորան ծանօթ էին Բուզանդարաններ, և Հոփիսիմեանց պատմութիւնը։ Ապա ինչպէս էլ որ ուղղենք «Որպէս կայտ ոչ ի զրի վասն» խանդարուած բառերը, կը հետեւի, որ Սարարագ յիշւում է «ի զրի», այսինքն զբքերում այլապէս առանձնապէս չէր շեշտիլ, մինչդեռ Մասիս՝ անդիր։

Եւ ինչ ասել կուզի, որ այս վէճը ծագած կը լինի աւելի վաղ Հայոց Ա. Գրքի գոնեա Բ. թարգմանութեան ժամանակ, եթէ միայն գեռ աւելի վաղ չէր սկսուած, երբ մեր թարգմանիչներն այլևս չպահեցին կորդուն։ Յունական քնազրի ազդեցութիւնը միայն բաւական չէր Մասսի մասին այդպիսի աւանդութիւն ստեղծելու, քանի որ Կարգուն էլ Հայաստանում էր և է. դարուց շատ առաջ եղած Մասսի աւանդութիւնը անշուշտ հայ ժողովրդականն էր։ Այս վէճն ահա երկար դարեր շարունակուել է. մինչեւ Թ.

1. Զեռագրում «ի Կորդուսիս Արարագ»։ Սարարագ օտարներին բնաւ անյայտ անունը ըստ Մուրագի «ասք Արարագ» կամ «ի լերինս Արարագայ» բառերից է շինուած կամ ծագած։

2. «Զեռագիրը դիմորոշ գրում է յաճախ տ, սոյն իսկ պատճառով թերեւս ընթեռնլի՝ որպէս կայ այդ ոչ<sup>(\*)</sup>», ասում է հրատարակիչը։ Մեղ թուսւմ է՝ մտքին աւելի մօտ և լաւ գրաբառ կը լինի «ոչ» ևս կարդայինք «որ»։ Եւ թերեւս ամբողջն այսպէս. «Որպէս կայ այդ ոչ ի զրի, որ վասն Թմանուն լերինն»։

3. Միարան (Դ. Տէր-Մկրտչեան), Հայկականք, էջ 19—22, Վաղարշապատ 1874։

լարը զրաւոր աղբիւրնելում՝ տիրող է եղել ասորական-աւանդութիւնը, քանի որ դեռ Թ. Արծրունին ասում է. «Տապանն յարեկեհան ի միջոց աշխարհի՝ հանգեաւ ի լեռ բինս կորդուաց»<sup>1</sup>, չնայելով նորան ծանօթ է և փոխւգականը<sup>2</sup>. իսկ այնուհետեւ ԺԱ.-ԺԲ. գարերում արդէն հայկականը՝ Մասիսը: Եւ երբ «վկայաբանութիւն Ս. Յակովայ Մծրնայ հայրապետին» [=Վ.] ասում է. «Խորհուրդ ի մտի եղեալ ս. Յակովը գնալ ուր հանգեաւ տապանն ի լերինն Այրուրատ»<sup>3</sup>, սորանից վերամշակուած՝ «Պատմութիւն ս. Յ. Մծրնայ հայրապետին» (=Պ) արդէն ունի Մասիս: Ասդառնալով «ի բանոն որ վասն տապանին յուզման» յարում է. «Արդ որ այսչափ հրաշագործէր ս. Յակոր, զիարդ անգիտանայր վասն տապանին, թէ ո՞ւր կառուցեալ կայ: Ոմանք ի լեառն կորդուաց ասացին և ոմանք ի լեառն Մասիս որ յԱյրարատեան դաւառին...: Եւ ասի ի պատմութեանն զոր յԱսորեաց մեծ ջանիւ զտի, եթէ յորժամ զհրաշոն արար նշան տապանին ի ծեռին իւրում՝ էր»<sup>4</sup>:

Արդ Մուրադը ճիշտ դիտել է և համեմատութիւններով ապացուցանում է, որ Վ.-ը քաղուած է Թէոդորէդից: իսկ «Վ.-ից վերամշակուած է Պ.ն<sup>6</sup>, որ այլ՝ և այն էլ ասորական ինչպէս և բնաշխարհիկ աղբիւրներից առնուած յաւելուածներով հարստացել ու զարգարուել է. ուստի եղրակացնում է. «Նոյն ասորական զրաւոր աղբիւրները որոնցից Յակորի վերոյիշեալ լեզենդաներն են քաղուած, պէտք է Փ. Բիւզանդին կամ աւելի ևս սորա պատմագրութեան խմբագրողին հիմք ծառայած լինին»: Եւ այս ենթադրութիւնն անտարակոյս է համարում Բուզանդարանի լուսանցքից «փոխանակ ազգաւն պարսիկ» բառերի բնազրի մէջ մտնելով, որով և «Ավրատէս զզաւն պարսիկը» շփոթուել է Յակովի հետ, ինչպէս և վերջապէս Մարարադ ան-

1. Պատմ. Ա., ա, 19:

2. Անդ, Ա., ա, 17. Հմմտ. Գ, իթ, 257:

3. Վարք և Վկայաբան. սրբոց, Բ, (83—107) 103. Վենետիկ 1874:

4. Ararat սով. Masis, X, 81—82: 5. Սովերք Հայկ. ԻԲ, էջ (1—63) 22—23: 6. Մ. Աւգերեան, Լիակատար Վարք Սրբոց, Ժ, 54—71 ծանօթ. Վենետիկ 1814:

ուան կազմութիւնը։ Սակայն Մ.-դը մոռանում է, որ Վ.-ի վկայութիւնը չունի ոչ միայն Թէոդորէդը, այլ և իւր յիշած միւս հեղինակները։ ուստի իւր այդ տեղի «միւս աղբիւրները» կարող են լինել միայն հայկական, որ հազորդում է Պ.-ն։ Լաւ պէտք է դիտել, որ Պ.-ն համոզուած է, թէ Մասիսն է տապանի լեռը և իւր խօսքն աւելի ապացուցանելու համար ասում է, Ասորւոց պատմութեան մէջ էլ գտայ, որ երբ Յակոբը հրաշքներ էր գործում, տապանի նշանը ձեռքուժն էր։ Այս տեղից տակաւին չէ հետեւում. թէ նորա Սարարադն էլ և հենց տապանի այդ աւանդութիւնն էլ ասորական աղբիւրից է, քանի որ այդ անունն իւր աւանդութեամբ Պ.-ից դարեր առաջ ունէին Հայերը, ինչպէս երեսում է Տիրանունից և Բուզանդարանից, այսպէս էլ և վէճը։ Եւ ի նկատի ունենալով Ս. Յակովի նշանակութիւնը Հայոց մէջ, որ տօնելի սրբերից է, մեր Լուսաւորչի աղքական է համարւում, թէև ուշ, և ժողովրդի մէջ ցարդ Բուզանդարանի պատմուածքը համարեա կայ բառացի Մասիսի մասին, կարելի էր կարծել, որ այդ աւանդութիւնը հայկական է, ծագած Դ. դարու վերջերում։ Երբ տակաւին զօրեղ էր ասորական աղդեցութիւնը<sup>1</sup>, իսկ եւ գարու սկըզբներում անցած Բուզանդարանին։

Ասորական և հայկական աւանդութեան վէճի արձագանքն է, կարծում ենք, որ լսւում է Հիերոնիմոսի վկայութիւնից, այլապէս փոխանակ մի բառի կարիք չկար նոյեան տապանի լեռը այնքան երկար ու բարակ որոշելու։ Եւ մեզ թւում է, որ հենց այս վէճի հնագոյն գոյութեամբ միայն կարելի է բացատրել մեր դասական ապա սոցանից մանաւանդ Խորենացուց ազգուած յետակայ հեղինակների մինչեւ Ժ. և Ժ. դարը տապանի լեռան մասին պահած զարմանալի և անմեկնելի լրութիւնը։ Եթէ Փ. Բիւզանդից սկսուած դեռ մինչեւ Թ. Արծրունին յիշում են Կորդուաց

1. Մորած, X, 55. Ե. Տէր Մինասեանց, Հայոց հկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիների հետ, Բ—Ե, 61—278. Ս. էջմիածին 1909։

լեռները, որովհետեւ զրաւոր աղբիւրներ՝ Եւսերիոսը և մանաւանդ ասորական ազդեցութեան հետ միասին ասորական Ո. Գրքի բնագիրն ինչպէս և Հայոց ա. թարգմանութիւնը նոցա համար աւելի բարձր հեղինակութիւն են եղել քան ժողովրդի անզիր զրոյցը։ Բայց մեր յունասէր հեղինակները Դ. Փարաեցին, Խորենացին ելն հակառակն են եղել, թէև չեն համարձակել գրաւոր պնդել։ Թերեւս հենց մեր ասորական և յունական դպրոցի վէճերից մէկն էլ այս է եղել, ուստի և վերջիններս հալածուել են։ Եւ ահա մենք կարող ենք Մուրադի հետ եղրակացնել։ «Հենց այն իրողութիւնը, որ հայ թարգմանիչները չեն պահել Պեշիթոյի և ասորական մեկնութիւնը, թէ Արարատի լեռները Կարդու լեռներն են, պարզ ապացուցանում է, որ այս բացատրութիւնը համաձայն չէր ժողովրդական ըմբռնման»։ և եթէ «Այս կամ այն գիտնականը կարող էր գուցէ տատանուել և կամ տարակուսել, թէ որը եղած լինի տապանի իսկական լեռը, Մասիսը թէ Կարդու լեռները, և գուցէ դպրոցներում այդ մասին վիճաբանած լինին», ինչպէս տեսանք, «Բայց ժողովրդի մէջ երբէք ներս չէ թափանցել Կորդուքի զրոյցը և զիտնականների մէջ էլ յարատե չէ մնացել. որովհետեւ այդ ոչ միայն հակառամ էր բնաշխարհիկ աւանդութեան, այլ և Ա. Գրքի խօսքին», այն է. «Եւ նստաւ տապանն... ի լերինս Արարատայ» Ծննդ. Բ. 4. Հայերէն թարգմանութեան<sup>1</sup>։ Եւ ինչու պէտք է Հայերը հեռուները

1. Յ. Մուրադը ծանօթութեան մէջ ասում է. «Ա. Գրքի միւս տեղերում հայ թարգմանիչները մասամբ պահել են երրայական բնագրի «Արարատը», այսպէս երեմ. ԾԱ. 27 այլարատեան թագաւորութեանցն (ոմանք թագաւորութեանն), ուր եւ ոմանք ի լուսանցս նշանակին. Հայք. և Բ. թագաւորութեանց ժժ, 37 յերկիրն արարադայ, ի լուս. Հայոց Մասամբ թարգմանեում է Հայք, ԵԱ. Ա. 38 ի Հայս։ Այս ընթերցուածքները առնուած են Զօրապեանի հրատարակութիւնից. սակայն այնտեղ Դ. թագաւորութեանց ժժ, 37-ի ծանօթութեան տակ ասուած է «ի լուսանցս» ի վերայ արարադայ նշանակի, Արմ. այսինքն Սիմաքոս դնէ. Հայոց։ Բայց

թափառէին տապանի լեռը փնտուելու, երբ այնքան մօտ  
էր Այրարատի, իրենց հայրենիքի, բարձրաբերձ, վեհա-  
պանծ, զբուցաշատ և հնուց ի վեր սրբագան Մասիսը»։

Ա. Կանայեան.

այդ, մանաւանդ «Սիմ հայոց» կարող է նշանակել և «Սիմ [լեառն] Հայոց», որովհետեւ այս ինչպէս և ես. Էլ, 38 տունը վերաբերում է Սենեքելիմի հայրասպան որդուոց փախստեան, որ ըստ Խորհ-նացու «Սիմն... լեառն» է (Ա, իդ, 48. Բ, Ը, 80=թ. Արծրունու Բ, Է, 121, Խոյթ): Հարկաւոր է այստեղ գիտել, և Երեմ. ԾԱ, 27-ի համար, որ Խորհնացու Մ. Արեղիանի և Ա. Յարութիւնեանի աշխատութեամբ տպագրուող քան ձեռագրերն և բոլոր տպագրերն ունին եղալի «թագաւորութեանն»:

1. F. Marad. Ararat und Masis, XII, 91—92: